25 ՄԱՅԻՍ 2013 ՇԱԲԱԹ 87(5170)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ե՞րբ կսովորենք խղճով ծախսել բյուջետային միջոցները

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նոր կառավարությունը Ազգային ժողովում իր ծրագրի հաստատումից հետո շուտով կաշխատի ողջ ներուժով: Նոր-հին կառավարության եւ նրա նախարարների համար թերեւս սթափեցնող նշանակություն պետք է ունենա 2012 թվականի բյուջետային միջոցների վերահսկողությամբ Վերահսկիչ պալատի հայտնաբերած չարաշահումների եւ անարդյունավետ ծախսերի թվային պատկերը, մանավանդ որոշ ոլորտներում արձանագրվել է խայտառակ պատկեր: Ազգային ժողովի այս քառօրյայում ներառված էր ՎՊ հաշվետվության ներկայացումը, սակայն մնաց հաջորդ նիստին, ինչը չի խանգարի մեզ մի քանի անդրադարձ անել այդ հաշվետվությանը՝ հույսով, որ ի վերջո մեր կառավարման մարմինները կսովորեն արդյունավետ ծախսել բյուջետային միջոցները:

Քաղաքաշինության ոլորտում վերահսկողության ընթացքում արձանագրվել են բազմաբնույթ խախտումներ եւ թերություններ՝ ընդհանրական եւ նույնությամբ կրկնվող գրեթե բոլոր օբյեկտներում: Դրանցից առավել հատկանշական են չկատարված աշխատանքների դիմաց վճարումները, անորակ աշխատանքները, արհեստական թանկացումները, նորմերի խախտումներով շինարարական նախագծերը՝ զարմանալիորեն փորձագիտական դրական գնահատականով, նախատեսված բարձրորակ նյութերի եւ ապրանքների փոխարեն դրանց ցածրորակ տեսակների օգտագործումը:

ՎՊ հաշվետվության մեջ ներկայացված օրինակներից մի քանիսը ներկայացնենք: «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկում ընտրանքային կարգով 8 օբյեկտում իրականացրած 986,090.0 հազ. դրամի հիմնանորոգման աշխատանքների ստուգմամբ արձանագրվել է 47,158.2 հազ. դրամի անորակ եւ վերականգնման ենթակա գումարի չափով խախտում:

Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակը թվով 6 օբյեկտի կառուցման համար կատարողական ակտերով կապալառուներին վճարել է 3,523,744.7 հազ. դրամ, մինչդեռ նշված աշխատանքների համար կառավարության որոշումներով հաստատված պայմանագրերի արժեքը կազմում էր 3,299,919.9 հազ. 3 դրամ:

Տես էջ 2

# Համանախագահները եղան նաեւ Երեւանում

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը երեկ ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին, Ժակ Ֆորին եւ Յան Քելիին, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին:



ԱԳՆ հաղորդագրության համաձայն՝ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարն ու ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները քննարկել են ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելու հնարավոր ուղիները:

Էդվարդ Նալբանդյանը համանախագահների ուշադրությունը հրավիրել է բանակցային գործընթացի էությունն ու բնույթը խեղաթյուրող ադրբեջանական կողմի շարունակական հայտարարությունների վրա, որոնք չեն նպաստում գործընթացի առաջխաղացմանը:

Համանախագահները նախարար Նալբանդյանին ներկայացրել են Բաքվում ունեցած հանդիպումների տպավորությունները: Հիշեցնենք, որ մայիսի 23-ին համանախագահները Բաքվում եւս ունեցել են հանդիպումներ, ինչպես հայտարարել էին վերջին իրենց հայտարարության մեջ:

Այլ մանրամասն չի հաղորդվում:

Վ. Պ.

# Ի հիշատակ Սարդարապատի հերոսամարտի մասնակիցների



Սարդարապատի հերոսամարտի 95-ամյակի առթիվ մայիսի 26-ին տեղի կունենա «Խոնարհում Սարդարապատի հերոսամարտի մասնակիցների հիշատակին» խորագրով միջոցառումների շարք, որը կազմակերպել է Հայոց ազգագրության ու ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի տնօրենությունը:

Միջոցառումների շարքը նախատեսում է առավոտյան ժամը 11-ին պատարագի ու հոգեհանգստյան կարգի մատուցում Էջմիածնի Սուրբ Գայանե եկեղեցում՝ ի հիշատակ Սարդարապատի հերոսամարտի մասնակիցների: Ապա 14-ին ծաղկեզամբյուղ կդրվի հերոսամարտի մասնակից, հազարապետ Վաղարշակ Շահինյանի շիրիմին, որը գտնվում է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի տարածքում: Իսկ 15.30-ին Սարդարապատի հուշահամալիր-թանգարանում կլինի Մանուկ Մուրադյանի «Ուսուբ բեկ» ռուսերեն գրքի շնորհանդեսը:

# Ճապոնացիները կհամարակալվեն

Ճապոնիայի խորհրդարանը ընդունել է օրենք, որը պահանջում է միասնական անհատական համար տալ երկրի յուրաքանչյուր քաղաքացու: Փաստաթուղթն ընդունվել է խորհրդարանի վերին պալատում: Այս ամիս ավելի վաղ դրան հավանություն էր տվել ստորին պալատը:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ միասնական համարները ճապոնացիներին կտրվեն 2015-ին, իսկ բուն համակարգը կգործի 2016-ից: Ենթադրվում է, որ դա պետական եւ մունիցիպալ ծառայություններին թույլ կտա էապես կրճատել քաղաքացիների սպասարկման ժամանակը, ներառյալ սոցիալական նպաստների եւ արտոնությունների, հարկային զեղչերի հատկացումը եւ այլն: Ներկայումս նման գործերի համար անհրաժեշտ է հավաքել բազմաթիվ փաստաթղթեր եւ դրանք ներկայացնել զանազան հաստատություններ: Ինչպես ենթադրվում է, նոր համակարգը իշխանություններին կօգնի նաեւ առավել արդյունավետորեն բացահայտել խախտումները, այդ թվում՝ հարկերից խուսափելու փորձերը: Անհատական համարը կոչված է նաեւ դյուրացնելու օգնության հատկացումը տարերային աղետներից տուժած անձանց, նույնիսկ եթե նրանք զրկվել են բոլոր փաստաթղթերից:

Նոր համակարգի աշխատանքը վերահսկելու նպատակով կստեղծվի անկախ հանձնաժողով, իսկ տվյալների նոր միասնական բազայից անձնական տվյալների արտահոսքը կպատժվի 4 տարվա բանտարկությամբ կամ 2 մլն իեն (մոտ 20 հազար դոլար) տուգանքով:

# Խաչքարի բացում Բեյրութում



Մայիսի 23-ին Բեյրութի Ս. Նշան մայր եկեղեցու բակում տեղի ունեցավ Սումգայիթի եղեռնագործության 25-րդ տարելիցին նվիրված խաչքարի բացման արարողություն: Միջոցառումն իրականացվել էր Հայոց ցեղասպանության 100-ամյակի Լիբանանի կենտրոնական մարմնի, «Փյունիկ» համահայկական հիմնադրամի եւ Լիբանանում ՀՀ դեսպանության նախաձեռնությամբ:

Հայաստանի արտաքին գործերի նախարարությունից տեղեկացանք, որ խաչքարի բացումից հետո Հայոց ցեղասպանության 100-ամյակի Լիբանանի կենտրոնական մարմնի անունից ելույթ է ունեցել **Ռաֆայել Ումուդյանը**: Նրանից բացի ելույթ են ունեցել ՀՀ հատուկ հանձնարարություններով դեսպան, «Փյունիկ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ **Լեւոն Սարգսյանը** եւ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ **Գեղամ արք. Խաչերյանը**:

Հանդիսությանը ներկա էին նաեւ պետական նախարար Փանոս Մանճյանը, խորհրդարանի անդամներ, հայ համայնքի տարբեր կառույցների ղեկավարներ ու ներկայացուցիչներ:

# Հունիսից ավիաընկերությունները կավելացնեն թռիչքները դեպի Հայաստան

## *«Զվարթնոց» օդանավակայանի հին շենքն առայժմ չի քանդվի*

Թել-Ավիվ-Երեւան-Թել Ավիվ նոր չվերթի բացման կապակցությամբ լրագրողների հետ զրույցի ժամանակ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության գլխավոր տնօրեն **Մարսելո Վենդեն** հայտնեց, որ առաջիկայում ավելանալու են տարբեր ավիաընկերությունների չվերթերը, հետեւաբար իջնելու են տոմսերի գները: Ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ **Անդրանիկ Շխյանն** էլ ասաց, որ փորձում են շատ ընկերություններ բերել Հայաստան: Մասնավորապես, Middle East ավիաընկերությունը հունիսի 5-ից շաբաթական երկու անգամ իրականացնելու է Բեյրութ-Երեւան չվերթ, «Լոտ» ընկերությունը հունիսի 15-ից՝ շաբաթական հինգ անգամ Երեւան-Վարշավա չվերթը, «Ֆլայ Դուբայը» հունիսի 5-ից ամեն օր իրականացնելու է դեպի Դուբայ թռիչքներ:

Մոսկվայի «Վնուկովո» օդանավակայանից Երեւան թռիչքներ է իրականացնելու «Տրանսէյր» ընկերությունը: Սա «Արմավիայի» նախկինում սպասարկած ուղղությունն է եղել: «Սիբիրավիան» Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանից շաբաթական չորս թռիչք է իրականացնելու երեքի փոխարեն, նույնքան էլ «Աէրոֆլոտը»՝ Մոսկվայի «Շերեմետեւո» օդանավակայանից նախկին երեքի փոխարեն: Ըստ Անդրանիկ Շխյանի՝ հունիսից շուկան կսկսի ակտիվանալ:

Ինչ վերաբերում է օդանավակայանի գներին, ապա «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալը, վկայակոչելով իրենց կատարած ուսումնասիրությունների արդյունքները, ասաց, որ մեր օդանավակայանի գները, տարածաշրջանի մյուս երկրների հետ համեմատած, թանկ չեն եւ նույնիսկ էժան են:

«Արմավիա» ընկերության հետ «Արմենիա միջազգային օդանավակայանների» հարաբերությունների մասին խոսելով՝ Անդրանիկ Շխյանն ասաց, որ «Արմավիայի» պարտքը իրենց ընկերությանը կազմում է 5,5 միլիոն դոլար: Ազգային ավիափոխադրող ունենալու վերաբերյալ հարցին էլ նա պատասխանեց, որ նպատակահարմար կլինի մեկի փոխարեն երկու այդպիսի ընկերություն ունենալ, որպեսզի խուսափենք այն խնդիրներից, որ եղան «Արմավիայի» սնանկանալուց հետո:

«Զվարթնոց» օդանավակայանի հին շենքը քանդելու հարցի առնչությամբ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալն այն կարծիքը հայտնեց, որ ընկերությունը որպես կոնցեսիոն կառավարիչ, իր զարգացման ծրագրերում այդ շենքը քանդելու առաջարկ է ներկայացրել: Սակայն քաղաքապետարանը նպատակահարմար չի գտել քանդել այդ շենքը: Այնուամենայնիվ, առաջիկա 5-10 տարիներին, եթե օդանավակայանը մեծացնելու անհրաժեշտություն լինի, կոնցեսիոն կառավարիչը ստիպված կլինի քանդել հին շենքը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ընդհանուր սահման չունենալը չի խոչընդոտի Եվրասիական միության հետ համագործակցությանը

«Մեր առջեւ դրված նպատակներից կարեւորն այն է, որ որեւէ կերպ քաղաքական միություն չստեղծենք: Այս տարածաշրջանի համար դա նման է ֆոբիայի: Առաջնահերթ մեզ համար հարկավոր է ստեղծել լիարժեք տնտեսական միություն, որը թույլ կտա ամրապնդել մեր տնտեսություննն ու միեւնույն ժամանակ նոր գլոբալ տնտեսության մեջ տեղ զբաղեցնել: Ես վստահ եմ, որ այդ գլոբալ տնտեսությունը կկայացնեն ոչ թե 200 պետություններ, այլ 20 տարածաշրջանային դաշինքներ, որոնք այսօր ձեւավորվում են»: Տեսակետը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրման եւ մակրոտնտեսության հիմնական ուղղությունների նախարար **Տատյանա Վալովայայինն** է: Նա հավաստիացնում է, որ Եվրասիական միություն ասելիս չպետք է կարծել, որ քաղաքական միություն է: «Մենք որեւէ կերպ չենք խոսում քաղաքական միության ձեւավորման կամ միության արտաքին քաղաքական ուղղվածության մասին: Մենք այդ առնչությամբ չենք մտածել ու չենք մտածում քննարկումներ անցկացնել, որովհետեւ դրա համար կան այլ հարթակներ: Մենք ՄԱԿ-ի անդամ ենք, արտաքին քաղաքականության վերաբերյալ բոլոր հարցերը քննարկում ենք այդ հարթակում եւ հույս ունեմ, որ այդ մակարդակին էլ կմնա», ասաց Վալովայան՝ հավելելով, որ Մաքսային միությունը բացառապես տնտեսական նշանակություն կունենա:



Վալովայան համամիտ չէ, որ Եվրասիական միությունը Խորհրդային Միության վերածնունդն է նշանակում: «Ռուսաստանը նման նպատակ իր առջեւ չի դրել եւ այդ նպատակը չի հետապնդում: Բոլոր նրանք, ովքեր ցանկություն կհայտնեն Եվրասիական տնտեսական միության հիմքի վրա ստեղծել Խորհրդային Միություն, առաջին հերթին կկորցնեն Ռուսաստանի աջակցությունը»: Տատյանա Վալովայան համոզված է, որ նման խոսակցություններն արհեստական բնույթ են կրում եւ հատուկ արվում, որ նման տրամադրություններ շատ լինեն: Նախարարը համոզված է, որ շատերն են գիտակցում, որ ճիշտ գաղափար է առաջ քաշված եւ այդ գաղափարը շատ կարեւոր է տնտեսության տեսանկյունից: Վալովայան հավաստիացնում է, որ Ռուսաստանն իր առջեւ խնդիր չի դրել բանակցել ինչ-որ երկրների հետ՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու համար: «Անկեղծ կլինեմ, դա մեզ ձեռնտու չէ: Մենք ելնում ենք այն հանգամանքից, թե ԱՊՀ երկրներից ով ինչպիսի որոշակի հետաքրքրություն է ցուցաբերում հարցի վերաբերյալ: Ձեր երկրի մասով պետք է ասեմ, որ կա փոփոխություն: Երբ գաղափարն առաջ եկավ, Հայաստանինը ընդամենը հետաքրքրություն էր, այժմ Հայաստանը դիտորդի կարգավիճակով մտավ Եվրասիական տնտեսական միություն», ասաց Վալովայան: Ռուս պաշտոնյան հավաստիացնում է, որ Հայաստանի կամ որեւէ այլ երկրի առջեւ չի դրվելու «կամ-կամ» տարբերակը: «Մենք խնդիր չենք տեսնում, որ Հայաստան-Եվրոմիություն հարաբերությունների զարգացման ուղղությամբ ընթանում են բանակցություններ: ԵՄ-ի հետ Հայաստանի հարաբերությունները չեն կարող խոչընդոտել Մաքսային միության շրջանակներում Հայաստանի ակտիվ գործունեությանը», ասաց Վալովայան:

Հայկական կողմին հետաքրքրող ամենակարեւոր հարցերից մեկն այն է, թե ինչպես կարող է երկիրն անդամակցել Եվրասիական միությանը, եթե չունի ընդհանուր սահման նախ Ռուսաստանի, ապա միության կազմում առկա այլ երկրների հետ: Տատյանա Վալովայայի գնահատմամբ՝ խնդիրը որեւէ կերպ չի խոչընդոտում Եվրասիական միության կայացմանը: Նա հղում է կատարում միջազգային պրակտիկայում առկա երեւույթին, երբ համատեղ սահմանի բացակայությունը չի խանգարել տնտեսական համագործակցությանը: Թեպետ Վալովայան շեշտում է, որ ընդհանուր սահմանի բացակայությունը կարող է խնդիրներ եւ չնախատեսված ծախսեր առաջացնել, սակայն անհաղթահարելի խոչընդոտ չէ: «Բացի դրանից՝ եթե համատեղ սահման չունենանք, Կովկասում տնտեսական իրավիճակն արագ զարգանալու պարագայում, կլուծվի նաեւ տարածքային հեռավորության հարցն ու ապրանքների տեղափոխումը խնդիր չի հարուցի»: Այս համատեքստում Վալովայան շեշտում է, որ մեր երկրից հիմնական արտահանվող ապրանքատեսակները լինելու են բարձր տեխնոլոգիաներն ու այդ առումով սահմանային խնդիրներ ընդհանրապես չեն առաջանում: Նախարարի խոսքով՝ Հայաստանի առեւտրաշրջանառությունը Մաքսային միության երկրների հետ շատ արագ է աճում: Մեր երկրի՝ վերոնշյալ երկրներ արտահանում աճել է 43, ներմուծումը՝ 17, իսկ առեւտրաշրջանառությունը՝ 22 տոկոսով: Մեր երկրից հիմնականումն արտահանվում են գյուղատնտեսական եւ սննդի արդյունաբերության ապրանքներ:

Հիշեցնենք, որ Մաքսային միության անդամ երկրներ են Ռուսաստանը, Բելառուսն ու Ղազախստանը: Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների նախաձեռնությամբ նախորդ տարի ստեղծվել է ռուս-հայկական համատեղ հանձնաժողով, որն ուսումնասիրում է Մաքսային միության եւ միասնական տնտեսական տարածքի հետ Հայաստանի հնարավորություններն ու ուղղությունները:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Մոսկվա**

**Հ. Գ. - Այցելությունը Մոսկվա իրականացել է «Ինտեգրացիա եւ զարգացում» հետազոտության եւ վերլուծության հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ:**

# Թեքեյան մշակութային միության նոր սրահի բացման արարողություն Նյու Ջերսիում

Մայիսի 18-ին Նյու Ջերսիում տեղի ունեցավ Թեքեյան մշակութային միության նոր սրահի բացման արարողությունը, որին մասնակցեցին ԱՄՆ արեւելյան ափի հայկական կառույցների ղեկավարներ, հոգեւոր դասի ներկայացուցիչներ, ազգային բարերարներ, ինչպես նաեւ ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Կարեն Նազարյանը:

Իր խոսքում, ընդգծելով Թեքեյան մշակութային միության դերը հայ ինքնության, լեզվի եւ մշակույթի պահպանության գործում, դեսպան **Նազարյանը** նշեց, որ հայապահպանման առաքելությունն իրականացնելիս սփյուռքում իրենց առանձնահատուկ դերակատարությունն ունեն ե՛ւ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին, ե՛ւ սփյուռքյան ավանդական կուսակցությունները, միությունները, մշակութային խմբերը, բարերարներն ու պարզապես անհատները:

Շնորհակալություն հայտնելով թեքեյանականներին իրենց դրսեւորած անսահման հայրենասիրության ու նվիրվածության համար՝ Կարեն Նազարյանն ընդգծեց, որ վերջին մի քանի տարիների ընթացքում Թեքեյան միությունը եւ ՄԱԿ-ում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը համատեղ կազմակերպել են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված հայրենիքի անկախությանը, հայկական բանակի կազմավորմանը, Շուշիի ազատագրմանը եւ ՄԱԿ-ին ՀՀ անդամակցության 20-ամյակին:

**ՀՀ ԱԳՆ մամուլի հետ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի վարչություն**

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՏՎՅԱԼՆԵՐ

# Ե՞րբ կսովորենք խղճով ծախսել բյուջետային միջոցները

*1-ին էջից*

*1-ին էջից*

**Փաստորեն առանց պայմանագրերի փոփոխության կապալառուներին պայմանագրային արժեքներից 223,824.8 հազ. դրամով ավելի է վճարվել:**

**Կրթության եւ գիտության նախարարությունում ընտրանքային կարգով ստուգված 4 օբյեկտում՝ 134,045.3 հազ. դրամ ընդհանուր գումարով կատարված հիմնանորոգման աշխատանքներում հայտնաբերվել է անորակ եւ վերականգնման ենթակա 8,625.8 հազ. դրամ գումարի չափով խախտում:**

**Ճանապարհաշինարարության ոլորտում իրականացված վերահսկողության արդյունքներով նույնպես բացահայտվել են ընդհանրական եւ համակարգային բնույթի խախտումներ՝ չհիմնավորված ծախսեր, նախահաշվային արժեքի գերազանցում, չնախատեսված աշխատանքի կատարում, որակյալի փոխարեն անորակ նյութերի օգտագործում եւ այլն:**

**Ընտրանքային կարգով «Իջեւան ՃՇՇ» ՓԲԸ-ում եւ «Արարատ ճանշին» ՍՊԸ-ում իրականացված ստուգմամբ արձանագրվել է 198,116.0 հազ. դրամ գումարի չափով խախտում, որից «Իջեւան ՃՇՇ» ՓԲԸ-ի վերականգնման ենթակա գումարը կազմում է 95,952 հազ. դրամ, անորակ աշխատանքներ ` 8,360 հազ. դրամ: Ստուգված «Արարատ ճանշին» ՍՊԸ-ում վերականգնման ենթակա գումար՝ 80,900 հազ. դրամ է, իսկ անորակ աշխատանքները գնահատված են 12,904.0 հազ. դրամ:**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարության շրջանակներում իրականացված վերահսկողության արդյունքներում արձանագրվել են էական խնդիրներ եւ ռիսկեր:**

**«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» ծրագիրն իրականացվել է թերություններով եւ խախտումներով: 2010թ. վարկային փաթեթից օգտված 30 սուբյեկտից գործում է 8-ը, 2011թ.՝ 17 սուբյեկտից՝ 8-ը, իսկ 2012 թ. վարկավորված 130 սուբյեկտից 11-ն արդեն իսկ լուծարվել կամ դադարեցրել է գործունեությունը: Մի շարք դեպքերում վարկերն օգտագործվել են ոչ նպատակային, իսկ ֆինանսական աջակցությունը տրամադրվել է ոչ հավաստի ցուցանիշների հիման վրա, ֆինանսական աջակցության միջոցները բավարար չափով չեն նպաստել բիզնեսի ընդլայնմանն ու աշխատատեղերի ավելացմանը:**

**Ռիսկային է նաեւ արդեն տրամադրված վարկային միջոցների վերադարձելիության խնդիրը, մասնավորապես ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով «Կոնսեր» ՍՊԸ-ին եւ «Վայք գրուպ» ՓԲԸ-ին հատկացված համապատասխանաբար՝ 395.000.0 եւ 164.000.0 հազ. դրամի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարելու արդյունքում վերականգնվել է ընդամենը 85,825.1 հազ. դրամը:**

**ՀՀ հասարակական վայրերի զուգարաններով ապահովման հայեցակարգի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին ձեռք բերված 2 բիոզուգարանները մինչ օրս չեն շահագործվում, որի հետեւանքով կատարված 100,000.0 հազ. դրամի ծախսը անարդյունավետ է (այս հարցին կառավարության վերջին նիստն արդեն անդրադարձել է՝ այդ զուգարաններից Երեւանում տեղադրվածը գործում է):**

**Կրթության եւ գիտության նախարարության եւ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի շրջանակներում իրականացված ստուգումներով նույնպես հայտնաբերվել են խախտումներ, թերություններ եւ ռիսկեր:**

**Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացման եւ կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման նպատակով «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամը կատարել է վերապատրաստման բուն գործընթացի հետ ուղղակի կապ չունեցող ծախսեր: Ընդ որում, մեկ դաստիարակի հաշվարկով միավոր/ժամի համար վարկային ծրագրերի շրջանակներում դաստիարակը ստացել է 3814 դրամ, մինչդեռ վերապատրաստման փորձ ունեցող «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում այն կազմել է 500 դրամ:**

**Ուսուցիչների վերապատրաստման եւ մասնագիտական զարգացման միջոցով կրթության որակի հետագա բարելավման ծրագրի շրջանակներում վերապատրաստող մասնավոր կազմակերպությունների համար վարկային միջոցներից ձեռք են բերվել 40,133.3 հազ. դրամի հիմնական միջոցներ, մինչդեռ հայտնի չէ, թե այդ կազմակերպությունները հաջորդ անգամ կընդգրկվե՞ն արդյոք վերապատրաստողների ցուցակում:**

**Դպրոցների տնօրենների վերապատրաստման գործընթացը նախապատրաստելու համար վարկային միջոցներից ծախսվել է 69,947.9 հազ. դրամ (մշակվել է ձեռնարկ եւ ուղեցույց, ինչպես նաեւ վերապատրաստվել են տնօրեններին հետագայում վերապատրաստող 25 դասախոսներ), սակայն տնօրեններն այդպես էլ չեն վերապատրաստվել, քանի գործընթացն դադարեցվել է:**

**Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման շրջանակներում բաց կրթական միջավայր (պլատֆորմ) ստեղծելու նպատակով կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, որի դիմաց միջազգային փորձագետին վճարվել է շուրջ 7 մլն դրամ, սակայն հետագայում «պլատֆորմի» ստեղծման գործընթացը դադարեցվել է:**

**Բարձրագույն կրթության ֆինանսավորման կայուն համակարգի ներդրման շրջանակներում նախատեսվել է ուսանողներին տրամադրել հատուկ վարկեր եւ այդ նպատակով 34,009.8 հազ. դրամի չափով կատարվել են նախապատրաստական աշխատանքներ (վարկերի տրամադրման մեխանիզմի ձեւավորում), սակայն հետագայում վարկերի տրամադրման գործընթացն դադարեցվել է:**

**2012 թվականի ՎՊ վերահսկողության արդյունքները կշարունակենք ներկայացնել:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

## Ջերմամեկուսացում եւ քամու, արեւի ու հիդրոէներգիան որպես այլընտրանք

*«Հայաստանի եվրոպացի բարեկամները» առաջարկում են գազի գնաճի փոխհատուցման տարբերակներ*

**Հայաստանում այլընտրանքային էներգետիկան զարգացնելու հարցի առնչությամբ մեր խմբագրությանն ուղարկված հաղորդագրության մեջ իր նկատառումներն է հայտնել «Հայաստանի եվրոպացի բարեկամներ» (ՀԵԲ) կազմակերպության գլխավոր քարտուղար Մայքլ Քամբեքը:**

Հայաստանում գազի գնի բարձրացման քննարկումների մասին խոսելով, «Հայաստանի եվրոպացի բարեկամների» գլխավոր քարտուղարը կոչ է անում Հայաստանի կառավարությանը եւ Եվրոմիությանը՝ կրկնապատկել ընդհանուր ջանքերը՝ նվազեցնելու Հայաստանում գազի սպառումը եւ կորուստը հիմնականում երկու ոլորտներում:

Առաջինը՝ Հայաստանում մինչեւ օրս բնակելի շենքերի մեծ մասը ջեռուցվում է հին համակարգերով, ինչի պատճառով էներգիայի մինչեւ 50 տոկոս կորուստ է լինում եւ կարիք ունի հիմնական ջերմամեկուսացման: Հետեւաբար, ըստ ՀԵԲ-ի, կառավարությունը պետք է իր սուբսիդավորման մեծ մասը կենտրոնացնի այդ խնդիրների լուծմանն ուղղված բարենորոգման ծրագրերի վրա, ինչպես նաեւ դիմի համապատասխան ծրագրերի փորձից ԵՄ-ի խորհրդատվությանը, այդ թվում նաեւ շենքերի էներգետիկ անձնագրերին վերաբերող ԵՄ-ի նոր ծրագիրը: Ի վերջո, ԵՄ-ը պետք է ֆինանսական աջակցություն ցուցաբերի էներգետիկ արդյունավետությանն ուղղված վարչական բարեփոխումներին, ինչպես նաեւ մասնակի օգնություն՝ բարենորոգման ֆինանսավորմանը: Եթե ԱՄՆ-ը միանա վերջինիս, նրանք կարող են ավելի մեծ վստահությամբ պնդել, որ Հայաստանը շարունակի թույլ կախվածություն ունենալ իրանական գազից:

Երկրորդը, որի մասին նշում է Մայքլ Քամբեքը, այն է, որ ներկայումս Հայաստանի էլեկտրաէներգիայի 30-40 տոկոսն արտադրվում է գազի շահագործմամբ աշխատող ջերմաէլեկտրակայաններում, մինչդեռ Հայաստանը շարունակում է ոչ արդյունավետ օգտագործել «արեւային, հողմային եւ հիդրոէներգիայի իր հսկայական ներուժը»: Այս վերականգնվող աղբյուրները կարող են բարձրացնել Հայաստանի էներգետիկ անկախությունը եւ ապակենտրոնացնել Հայաստանի էներգիայի արտադրության ռազմավարական վտանգները բնական աղետների կամ հակամարտությունների ժամանակ: Գերմանիան, այլ երկրների շարքում, Հայաստանին առաջարկել է վերականգնվող էներգիայի ծրագիր, որը պետք է արագ գործարկել եւ հնարավորին չափ լայն ընդգրկմամբ:

«Մենք կարծում ենք, որ խնդիրը պետք է լուծվի հիմնականում Հայաստանում, որը կրում է էներգետիկ շուկայի նույնատիպ փոփոխություններ, ինչ Կենտրոնական Եվրոպայի երկրները 1990-ականներին, եւ այդ գործընթացը կշարունակվի առաջիկա 10-20 տարիների ընթացքում: Գազի գնաճերը կարող են փոխհատուցվել, նույնիսկ գերհատուցվել, եթե գները անկում ապրեն այլ ոլորտներում, եւ նվազեցվի գազի միջին սպառումը հայաստանյան ընտանիքներում: Այդ նպատակով վերը նշված բոլոր միջոցները պետք է միասին կիրառվեն», ասված է «Հայաստանի եվրոպացի բարեկամներ»-ի հաղորդագրության մեջ: Ըստ ՀԵԲ-ի՝ հայաստանցիները պետք է նաեւ վստահ լինեն, որ ԵՄ-ի հետ խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու մասին համաձայնագիրը կօգնի շուկայի արդյունավետությանը եւ առաջիկա տարիներին կնվազեցնի ապրանքների գները Հայաստանում:

Ա. Մ.

ԳՅՈՒՄՐԻ

## ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի միջոցառումները կմեկնարկեն հունիսի վերջին

«Գյումրին՝ ԱՊՀ 2013 թ. մշակութային մայրաքաղաք» ծրագրի հանդիսավոր մեկնարկը, որը նախատեսված էր հունիսի 2-ին, հետաձգվում է եւ հավանաբար կտրվի նույն ամսվա 30-ին: Նշվող պատճառները երկուսն են, եւ երկուսն էլ կապված են եղանակային անբարենպաստ պայմանների հետ:

Ինչպես տեղեկացրել է տեղում ծրագրի նախապատրաստական աշխատանքները համակարգող փոխքաղաքապետ Ռուբեն Սանոյանը, ըստ եղանակի տեսության հունիսի այդ օրերն անձրեւաշատ են լինելու, իսկ քանի որ մեկնարկի հանդիսությունները հիմնականում նախատեսված են բացօթյա, աշխարհի տարբեր երկրներից մեծ թվով պատվավոր հյուրերի մասնակցությամբ, որոշվել է ռիսկի չդիմել: Մյուսը քաղաքի փողոցների քանդուքարափ վիճակն է. կենտրոնական հրապարակի եւ նրան հարող փողոցների ապրիլից սկսված նորոգման-ասֆալտապատման շինարարական աշխատանքներն անձրեւային եղանակների պատճառով ձգձգվում են, եւ պետք է դրանք տեղը տեղին հասցնել, քաղաքի հանդիսություններում ընդգրկված մասը բարեկարգ, ներկայանալի տեսքի բերել:

ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի միջոցառումները, ըստ հավաստիացումների, լինելու են բազմազան եւ տեւելու են մինչեւ նոյեմբեր ամիսը, ընդգրկելով մշակույթի եւ արվեստի տարբեր ոլորտներ: Կազմակերպվելու են նաեւ հումորի, կինոյի, քանդակի ու այլ փառատոներ, ներկայացվելու է քաղաքի մշակույթն իր ողջ գունապնակով: Միջոցառումները ֆինանսավորվելու են տարբեր աղբյուրների, այդ թվում՝ նաեւ ԱՊՀ հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի կողմից: Գյումրու քաղաքապետարանի ներդրումը լինելու է 20 մլն դրամ:

Գ. Մ.

## Շիրակի երկրագիտական թանգարանի շենքի խնդիրը՝ կրկին օրակարգում

Շիրակի երկրագիտական թանգարանում հավաքված են այս պատմագավառի նյութական եւ հոգեւոր մշակույթը ներկայացնող մոտ 30 հազար նյութեր, որոնցից շատերը եզակի են եւ ունեն բացառիկ գիտամշակութային արժեք: Թանգարանի ցուցանմուշներն ամփոփված են հնէաբանության, հնագիտության, ազգագրության, դրամագիտության, գեղարվեստական, նոր եւ նորագույն պատմության նյութերի հավաքածուներում, որոնք տարեցտարի հարստանում են կատարվող հնագիտական եւ այլ հետազոտական-որոնողական աշխատանքների շնորհիվ, վերջիններիս արդյունքներն էլ պարբերաբար դրվում են գիտական շրջանառության մեջ, լայն հետաքրքրություն առաջացնում:

Սակայն իր գոյության 70 տարիների ընթացքում գիտամշակութային այս ճանաչված օջախը չի ունեցել եւ այժմ էլ չունի հիմնական շենք: 1987 թվականից տեղավորված է քաղաքի հին թաղամասերից մեկի մի փոքրիկ շենքում, որտեղ չկան բնականոն աշխատանքային գործընթաց կազմակերպելու նվազագույն պայմաններ, նույնիսկ ջուր եւ կոմունալ հարմարություններ, իսկ 88-ի երկրաշարժից շենքը վթարային է դարձել եւ միայն մասնակի է ամրացվել: Թանգարանը չունի ցուցադրություն, ազգային հարստություն հանդիսացող հազարավոր մասունքներն անմատչելի են մնում լայն հասարակությանը:

Երկրագիտականի շենքի խնդիրը տարբեր տարիների միշտ առաջ է քաշվել, ինչ-ինչ լուծումներ են առաջարկվել, բայց հարցն այդպես էլ մնում է չլուծված: Վերջերս այս հարցի հետ կապված ուղերձով կառավարությանն է դիմել Գյումրու ավագանին: Իսկ օրերս խնդրին ծանոթացել է թանգարան այցելած Շիրակի նոր մարզպետ Ֆելիքս Ցոլակյանը: Մարզպետարանի կայքէջի մատուցմամբ, Ֆ. Ցոլակյանը կարեւորել է թանգարանի համար գոնե անհրաժեշտ տարածական պայմանների ապահովումը, հայտնել, որ հարցը մարզային իշխանության ուշադրության կենտրոնում է եւ այժմ քննարկվում են խնդրի կարգավորման մի քանի տարբերակներ:

Մարզպետն այցելել է նաեւ Ասլամազյան քույրերի թանգարան-պատկերասրահ, խոստացել հնարավորության դեպքում աջակցել վերջինիս մասնակի նորոգման հարցում եւս: Այս շենքը «Լինսի» հիմնադրամի միջոցներով նորոգվել-վերակառուցվել է 2004 թվականին:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

## Ֆինն պատվիրակներ Մանկավարժականում

**Աշխատանքային այցով Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էին Ֆինլանդիայի համալսարանների դասախոսների միության ներկայացուցիչները՝ տարբեր մասնագիտությունների գծով 12 դասախոս:**

**Նրանք համալսարան էին այցելել մանկավարժական կրթություն իրականացնող առաջատար բուհի գործունեությանը ծանոթանալու, ինչպես նաեւ փորձի փոխանակման համար:**



**Կրթության որակի եւ հեռակա ուսուցման գծով ՀՊՄՀ պրոռեկտոր Տիգրան Այվազյանը նիստի ընթացքում ներկայացրեց Մանկավարժականի կառուցվածքը, մասնագիտությունները, բակալավրիական եւ մագիստրոսական կրթական ծրագրերը, կրթական բազմաթիվ ծրագրերով այլ բուհերի, հատկապես Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ համագործակցությունը:**

**Դասախոսների եւ ուսանողների մասնակցությամբ ընդլայնված նիստի ժամանակ աշխատակազմի եւ միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանն ընդգծեց, որ ֆինն պատվիրակների ներկայությունը համալսարանում վկայում է՝ միջազգային համագործակցության զարգացման ճանապարհին բուհն ընթանում է ճիշտ ուղով:**



**Պրոռեկտորը շեշտեց հատկապես Օուլուի համալսարանի հետ համագործակցությունը, որի արդյունքում Մանկավարժականում վերանայվել են կրթական ծրագրերը, ներդրվել պրակտիկայի նոր համակարգ, փոխվել է կառավարման հաշվետվողականության եւ թափանցիկության ռազմավարությունը, ինչպես նաեւ կարեւորվել որակի ապահովման ձեռնարկն ու կարիերայի կենտրոնի աշխատանքները:**

**«Մեկ այցն էլ բավական է բուհի հյուրընկալությունը նկատելու համար, սակայն առավել հաճելի է մեր ազգային դրոշը այստեղ տեսնելը»,-նշեց պատվիրակության ղեկավար Սեպպո Սաինիոն:**

**Իր ելույթում վերջինս կարեւորեց դասախոսների եւ ուսուցիչների առաքելության բարձրացումը՝ օրինակ բերելով այդ ոլորտում Ֆինլանդիայի փորձը. «Դասախոսների մասնագիտական որակների, իրավունքների զարգացման տեսանկյունից մեզանում մեծանում է արհեստակցական միություններում նրանց ներգրավվելու միտումը»:**

**Փորձագետը հավաստիացրեց՝ ինքնազարգացման, հետազոտական նոր հնարավորությունների ստեղծման եւ զարգացման, ինչպես նաեւ նոր համագործակցության տեսանկյունից Բոլոնիայի գործընթացի շրջանակում ներկայումս Ֆինլանդիայում կրթության ոլորտի միջազգայնացումը համարվում է առաջնային:**

**Նիստի ընթացքում գործընկեր կողմերը դիտեցին Մանկավարժական եւ Ֆինլանդիայի համալսարանների մասին պատմող տեսաֆիլմ եւ պատկերային ներկայացում, որում առավել մանրամասն ներկայացվեց երկու համալսարանների գիտակրթական գործունեությունն ու տարբեր ոլորտներում վերջին տարիների ձեռքբերումները:**

**Աշխատանքային օրվա ավարտին ֆինն պատվիրակներն այցելեցին բուհի թանգարան, ինչպես նաեւ հյուրընկալվեցին կուլտուրայի ֆակուլտետում, որի դահլիճում նրանց ողջունեցին պարարվեստի բաժնի ուսանողները:**

## Այսօր եւ վաղը՝ անձրեւ, ամպրոպ ու կարկուտ

ԱԻՆ «Հայպետհիդրոմետի» տվյալներով, Երեւանում մայիսի 25-ին՝ գիշերվա առաջին կեսին եւ օրվա երկրորդ կեսին, մայիսի 26-ին ժամանակ առ ժամանակ շրջանների զգալի մասում սպասվում են հորդառատ անձրեւ եւ ամպրոպ, առանձին վայրերում հնարավոր է կարկուտ: Ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում մինչեւ 18-23 մ/վրկ:

Մայիսի 26-ին նաեւ կնվազի օդի ջերմաստիճանը՝ 3-5 աստիճանով: Գիշերը մայրաքաղաքում կլինի +14+16, իսկ ցերեկը՝ +29+31 աստիճան:

# Կառավարության խոստումներն ու նպատակները՝ ավելի կոնկրետ

## Ի՞նչ սպասելիքներ ունենանք առաջիկա 4 տարիներին

Թեեւ կանխատեսումներն անելն անշնորհակալ գործ է, բայց աշխարհի բոլոր կառավարությունները իրենց ծրագրերը ներկայացնելիս պարզապես պարտավոր են ներկայացնել կոնկրետ միջոցառումներ եւ կանխատեսումներ անել, թե դրանք ի՞նչ արդյունքների կհանգեցնեն: Բացառություն չէ նաեւ Հայաստանի կառավարությունը, որի ղեկավարը մի քանի օր առաջ Ազգային ժողովում ներկայացրեց առաջիկա 4 տարիների իր գործունեության ծրագիրը եւ քննարկումները դրա շուրջը հիմա էլ շարունակվում են: Սակայն, ավելի կոնկրետ նպատակային ցուցանիշները տեղադրված են կառավարության ծրագրում: Որո՞նք են դրանք, ի՞նչ պետք է փոխվի նոր կառավարության գործունեության արդյունքում առաջիկա 5 տարիներին, մասնավորապես սոցիալ-տնտեսական կյանքում:

2013-2017-ի, ընթացքում կառավարությունը նպատակադրել է մեր երկրում ապահովել զարգացած երկրների համեմատ ավելի բարձր տեմպերով տնտեսական (համախառն ներքին արդյունքի) աճ՝ տարեկան 5-7 տոկոս, ինչպես նաեւ ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճ: Հարկ է նշել, որ վերջին 2 տարիներին արդեն իսկ տնտեսական աճի այս տեմպն առկա է, իսկ վերջին 2 ամիսներին արձանագրվում է արտահանման աճ եւ ներմուծման նվազում, թեեւ այս ցուցանիշը միտում համարելու համար դեռեւս ժամանակ է պետք:

Հաջորդ նպատակը նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկումն է: Հիշեցնենք, որ ներկայումս նվազագույն աշխատավարձը 35 հազար դրամ է, բայց հուլիսի 1-ից նախատեսված է սահմանել 45 հազար դրամ, ինչը նշանակում է աշխատավարձերի համամասնորեն մոտ 30 տոկոսով բարձրացում: Նվազագույն աշխատավարձի կրկնապատկման դեպքում 4 տարի հետո պետք է լինի 70 հազար դրամ: Համեմատության համար նշենք, որ այս պահի դրությամբ Հայաստանում միջին աշխատավարձը կազմում է 141 հազար դրամ: Նվազագույն աշխատավարձի կրկնապատկման դեպքում պետք է ենթադրել, որ 4 տարի հետո միջին աշխատավարձը Հայաստանում կգտնվի 280-300 հազար դրամի սահմաններում:

Սոցիալական ոլորտի մյուս նպատակներն են նվազագույն աշխատավարձ/աղքատության ցուցանիշի առնվազն 140 տոկոս մակարդակի ապահովում, ծնելիության գումարային գործակցի աճ՝ մինչեւ 1,8-ի, 5-6 տարեկան երեխաների առնվազն 90 տոկոսի համար նախադպրոցական կրթության հասանելիության ապահովում, միջին աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի մակարդակի բարձրացում՝ հասցնելով աղքատության գծի համեմատ առնվազն 125 տոկոսի, աղքատության կրճատման ապահովում՝ 8-10 տոկոսային կետով: Ի դեպ, աղքատության վերացումը կառավարության ծրագրում գերակայությունների մեջ է նշված, ինչի մասին խորհրդարանում հայտարարեց վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Ներկայումս Հայաստանի բնակչության 34 տոկոսը համարվում է աղքատ: 2008-ին աղքատության ցուցանիշը, 7-8 տարվա ընթացքում, 51 տոկոսից նվազել էր, հասնելով 25 տոկոսի: Ցավոք, աղքատության մակարդակը բարձրացավ տնտեսական ճգնաժամի հետեւանքով, եւ կառավարությունը պարտավորվել է 2017-ին այդ ցուցանիշը հասցնել նախաճգնաժամային մակարդակին, ինչը նշանակում է, որ մոտ 300 հազար մարդ պետք է դադարեն աղքատ լինել:

Հայաստանի համար կարեւոր հաջորդ հիմնահարցը գործազրկությունն է: Այս առումով առաջիկա 5 տարիներին կառավարությունն ակնկալում է պայմաններ ապահովել 100 հազարից ավելի նոր աշխատատեղերի ստեղծման համար: Ընդ որում, ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածների թիվը պետք է ավելանա 30-50 հազարով:

Նախատեսվում է նաեւ տարեկան համախառն ներքին արդյունքի նկատմամբ 0,3-0,4 տոկոսային կետի չափով պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճի ապահովել: Այս ցուցանիշի ապահովումը, ըստ էության, հիմնական անհրաժեշտ պայմանն է այն բոլոր սոցիալական ծրագրերի, որ նպատակադրել է իրականացնել կառավարությունը, քանի որ առանց ստվերի նվազման եւ հարկերի հավաքման մակարդակի բարձրացման, միջոցները պարզապես չեն բավարարի այդ նպատակների իրականացման համար:

Միեւնույն ժամանակ, ծրագրում նշվում է, որ արտաքին տնտեսական միջավայրի վատթարացումը կարող է որոշակի ճշգրտումներ մտցնել նաեւ Հայաստանի կառավարության ծրագրերի իրագործման համար՝ վտանգելով թիրախային ցուցանիշների հասանելիությունը: Նման դրսեւորումները կարող են զսպել ՀՆԱ աճի տեմպը: Հայաստանի կառավարությունն այս պայմաններում ջանքերը կկենտրոնացնի Հայաստանի տնտեսության կայունության պահպանման, ներքին ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործման միջոցով տնտեսական զարգացման ապահովման վրա, ելնելով Հայաստանի՝ տվյալ պահին առկա յուրահատկություններից:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Գյուղոլորտը՝ տարակուսանք առաջացնող վիճակում

Եվրոպայի կենտրոնում գտնվող Ավստրիայի հետ հայաստանյան հիմնական նմանությունների օրինակներից կարելի է մի քանիսը նշել. երկուսն էլ համաշխարհային ջրերի նավահանգիստներ չունեն, ընդերքները հարուստ չեն նավթով ու գազով, 1 քմ-ի վրա բնակվողների թվով պատկերը գրեթե մոտ է, գյուղգործունեության հիմնական միջավայր վարելահողերի առումով էլ 1 բնակչի հաշվով բաժին է հասնում 1700 քմ եւ նման բաներ: Ավստրիացիների գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերում էլ էական տարբերություն չկա. հացահատիկ, կարտոֆիլ, խաղող ու բանջարեղեն: Շտիրիայի մարզը, որը երկրի հարավում է եւ ավելի մոտ Իտալիային, համարվում է խաղողագործական շրջան: Այցելածս որոշ այգիներ այս շրջանում հայաստանյան խաղողի տարածքների համեմատ յուրօրինակ տեսք ունեն, որոնք տարվա արդյունքով աշնանը ցանկալի բերք են ապահովում: Այգիները հիմնականում 400-600 մ բարձրության վրա են, գրեթե չեն ջրվում, շատ քչերը պաշտպանված են ցանցերով:

Բայց տարօրինակն այլ է. խաղողագործական համարվող տարածքում ավելի հաճախ կարելի է եգիպտացորենի դաշտերի հանդիպել. վերջիններս կան անգամ Գրաց քաղաքի վարչական գոտում: Տեսել եմ 2-4 հա ընդգրկող նման մի քանի դաշտեր, որոնցից, կարծում եմ, Երեւանի տարածքից մասամբ փոքր 300 հազար բնակչությամբ այս քաղաքում էլի կան: Գիտեմ, որ որոշ ազգեր եգիպտացորենի ալյուրից հաց են թխում, որը, վստահեցնում եմ, ավստրիացիներին չի վերաբերում: Այլեւայլ տասնյակ տեսակների հացամթերքների ցանկում եգիպտացորենի արտադրանքի շատ քիչ ենք հանդիպում: Ավստրիացիները եգիպտացորեն մշակելով այլ նպատակ են հետապնդում եւ մի բան հաստատ գիտեն. այս մշակաբույսի 20-25 կգ սերմը 1 հա-ի հաշվով 8-9 տոննա բերք է երաշխավորում, որն առավելագույն կերամիավոր պարունակելով լիարժեք անասնակեր է բոլոր տեսակի անասունների համար: Իսկ անասնամթերքներ, միս, կաթ, ձու, դրանց վերամշակումներ ավստրիացիները շատ են սիրում, դրանք սպառում են ամեն օր, մի քանի անգամ, որպիսի նախասիրություններ ունենք նաեւ հայաստանաբնակներս առանց բացառության: Հիշյալ ավստրիական արտադրատեսակները գրավիչ տեսք ունեն, վաճառվում են հարմար փաթեթավորումով, որոնց վրա նշված են գնորդին հետաքրքրող ու մտահոգող բոլոր տվյալները: Դրանց գները տարբեր են. թե՛ հայաստանյանին մոտ, թե՛ կրկնակի ու եռակի գերազանցող: Բայց դրանք կարելի է գնել նաեւ որոշակի ցածր գներով, որոնք տարբեր ձեւերով իրականացվում են գրեթե յուրաքանչյուր շաբաթ, երբեմն իրարից 100-150 մ հեռավորության վրա գտնվող սուպերմարկետներում: Այս մասին հիշեցնող առեւտրային ցանցի գովազդային թերթիկները անվճար վաղ առավոտյան են հայտնվում ավստրիաբնակների փոստարկղերում, որոնցից վերցված լուսանկարները պարբերաբար ենք ներկայացրել մեր ընթերցողներին:



Հիմա ծանոթանանք Ավստրիայի անասնապահության հիմնական ուղղությունների մի քանի թվերի: Երկրում պահվում են բարձր կաթնա-մսատու 2 մլն խոշոր եղջյուրավոր եւ 3 մլն-ից ավելի խոզ, 16 մլն հավ եւ սրանց համեմատ աննշան մանր եղջյուրավոր: 2010-ին միայն խոզի մսի արտադրությունը կազմել է 540 հազար տոննա, թեեւ երկիրն ունեցել է նաեւ 620 հազար տոննայի ցուցանիշ: 8 մլն բնակչության պարագայում 1 բնակչի հաշվով ստացվում է տարեկան 70 կգ խոզի մսի արտադրություն, որին տավարի ու հավի մսատեսակներն էլ հավելելով ապահովվում է այն միջավայրը, որի մասնակի պատկերացումն ունենք հայաստանցիներս այս երկրի մասին: Ավստրիայի մեծ ու փոքր բնակավայրերում ապաստանած մեր մի քանի հազար հայրենակիցները փաստում են, որ գերմանախոս այս մարդիկ էական ոչնչով այլից չեն առանձնանում, եթե չնշենք բարվոք սննդի արդյունքում ձեւավորվող բարեխիղճ աշխատասիրությունն ու որոշակի բծախնդրությունը: Վերջին հատկանիշը դրսեւորվում է ամենուր եւ բարյացակամորեն է ընդունվում երկրում հաստատվողների, այդ թվում մեր հայրենակիցների կողմից, որոնց գերակշիռ մասը հայաստանցիներ են, ժամանակավոր թե հիմնական Ավստրիա տեղափոխվածներ: Ուրեմն ի՞նչ անել այս ամենը Հայաստանում ապահովելու, արտագաղթ թույլ չտալու եւ առավել ցանկալի ներգաղթ ու վերադարձ ապահովելու, համանման լրատվությունն էլ անհարկի գովազդ չդարձնելու նպատակով:

ՀՀ քաղաքացու այսօրինակ մտորումներով էր պայմանավորված ամիսներ առաջ երկրի բարձրագույն ղեկավարությանն ուղղված մտահոգությունս, կապված ՀՀ վարելահողերում առվույտ ու կորնգան մշակելու լայնածավալ ծրագրի հետ: Համաշխարհային փորձը փաստարկելով տարբեր առիթներով նշել, ակնարկել ու ահազանգել եմ, որ ՀՀ գյուղոլորտում փորձարկումների նմանվող գործընթացները որեւէ հիմնավորում չունեն, չեն բխում գործարար միջավայր ստեղծելու տրամաբանությունից եւ անցանկալի հետեւանքների են հանգեցնում, այդ թվում ավերիչ դրսեւորումների պատճառ դառնում: Բայց չգիտես ում մտքով է անցել եւ իշխանական որ մակարդակում որոշում կայացվել հերթական անգամ առաջնորդվել «փորձը փորձանք չէ» սկզբունքով: Անշուշտ, առվույտն ու կորնգանն էլ են անասնակեր, միայն այն տարբերությամբ, որ դրանցով սնված անասունները իրենց մթերատվությամբ մի քանի անգամ զիջում են: Երկիր մոլորակի արդեն թիվ 1 մշակաբույս համարվող եգիպտացորենի հաշվին: Ամենուր իրավիճակը պարզից էլ պարզ է, միայն ոչ... ՀՀ գյուղնախարարության համար, ուր համամիտ չեն տողերիս հեղինակի՝ ՀՀ նախագահին ուղղված «Ահազանգում թիվ 7»-ի այն գնահատականին, որ նախարարությունը պատրաստակամ չէ լուծելու երկրի պարենային անվտանգության ապահովման խնդիրը: ՀՀ գյուղնախարար Ս. Կարապետյանի ստորագրությամբ վավերացված պատասխանում ընդգծվում է, որ հանրապետությունում վերջին տարիներին որոշակի աշխատանքներ են իրականացվել անասնաբուծության զարգացման ուղղությամբ, դրանք նշվել են կոնկրետ թվերով. մսի իրացման ծավալների աճ մոտ 2 տոկոսով, կաթի՝ 3 տոկոսով, ձվի՝ 4 տոկոսով: Միայն թե արտառոց տարօրինակ է, որ նման ցուցանիշներ արձանագրվում են յուրաքանչյուր ակնթարթ աղքատացող ՀՀ գյուղական բնակչության պարագայում, արտերկրներից ներկրված էժանագին մսատեսակներից ու կաթի փոշուց պատրաստված երշիկեղենի ու կաթնամթերքի ստացման արդյունքում, հայ հողագործի աշխատանքը ոչ լիարժեք արդյունավետության ուղղորդելու հետեւանքով, նրան արտագաղթելու դրդելու միջոցով: Անհասկանալիից առավել անընդունելի է, թե ինչու է հարկատուների միջոցներով պահվող ՀՀ իշխանության մաս կազմող գյուղնախը անհրաժեշտ համարում առաջիկա տարիներին 80-100 հազար տոննա խոզի մսի արտադրությունը, խոչընդոտ հռչակելով խոզերի անհրաժեշտ գլխաքանակի ու լիարժեք կերերի բացակայությունը: Վստահ նշեմ, որ Երկիր մոլորակի չորս կողմերում կարողանում են պարզագույն այս խնդիրը լուծել: Մեր տարածքն ունեցող Բելգիայում 6,5 մլն խոզ են պահում, հարեւան Դանիայում դրա կրկնակին կա, Բրազիլիայում այս անասնատեսակը 50 մլն է, Չինաստանում 500 մլն: 2000-2010 թթ այս մսատեսակի համաշխարհային արտադրությունն ավելացել է 20 մլն տոննայով: ՀՀ-ում թե՛ արտադրությունն է աննշան, թե՛ աճը, որը որեւէ տրամաբանական բացատրություն չունի, քանզի խոշոր ծավալներով ներկրում է իրականացվում: Երկիր մոլորակի վրա ամենուր գերարտադրություն է արձանագրվում, որի անմիջական ականատեսն ենք դառնում հայաստանյան առեւտրային ցանցում գնումներ կատարելիս: Հայաստանի պարագայում իրավիճակում փոփոխություն հնարավոր չէ, քանզի մերն ուրիշ է, տարօրինակորեն ուրիշ, ուրիշների տարակուսանքը հարուցող ուրիշ: Ավստրիացի ծանոթներս միամտորեն հարցնում են, թե խոզի միսն ի՞նչ է, որ պահանջվող ծավալներով արտադրել չենք կարողանում: Ցավոք, պատասխանը տրամաբանությունից դուրս է:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
*Ավստրիա, Գրաց*

# ԱՄՆ-ը եւ Իրանը համագործակցո՞ւմ են

Իրանի դեմ ԱՄՆ-ի ձեռնարկած քաղաքական եւ տնտեսական պատժամիջոցների, ինչպես նաեւ այդ երկրի միջուկային ծրագրի շուրջն անհանգստության, ներառյալ ուժ կիրառելու մասին մշտական դարձած տեղեկատվության համապատկերին երեկ «Ադրբեջանում էներգետիկ եւ ծովային իրավունքը. ազգային եւ միջազգային հեռանկարներ» խորհրդաժողովում ելույթում չափազանց ուշագրավ հայտարարություն է արել Բաքվում Միացյալ Նահանգների դեսպան Ռիչարդ Մորնինգսթարը:

Դեսպանի տեղեկացմամբ՝ «Կասպից ծովի Շահդենիզ հանքավայրի շահագործման վրա կարող էր արգելք դրվել, քանի որ Իրանը Շահդենիզ նավթային հանքավայրում 10-տոկոսանոց մասնաբաժին ունի, եւ Իրանի հետ նավթագազային ոլորտում համագործակցող ընկերությունները կարող են ԱՄՆ կողմից պատժամիջոցների սպասել» (http://haqqin.az/news/6064):

Այդ իրավիճակում ինչպե՞ս է վարվել ԱՄՆ Կոնգրեսը: Մորնինգսթարի ներկայացմամբ՝ ամերիկյան օրենսդիրները նպատակահարմար են գտել «պահպանել փոխզիջումային ելք»: Իսկ եթե այդպիսի որոշում չընդունվեր, ապա «Շահդենիզի շահագործումը մոտակա 20 տարիներին կարող էր սառեցվել»: Այդ դեպքում «միջազգային ընկերությունները չէին կարող առաջ շարժվել շահագործման հարցում»:

Դեսպանն, իհարկե, հաշվի է առել, թե ինչպես է ընկալվում «փոխզիջումային ելք պահպանելու» մասին Կոնգրեսի որոշման մասնակի գաղտնազերծումը, քանի որ ըստ էության նա խոստովանել է, որ հանուն Շահդենիզ հանքավայրի շահագործման ամերիկյան օրենսդիրները, անշուշտ՝ ոչ առանց Սպիտակ տան հորդորների կամ նույնիսկ ճնշումների, փաստորեն աչք են փակել նավթագազային ոլորտում Իրանի հետ համագործակցության փաստի առաջ, ուստի չափազանց «գործնական» բացատրություն է տվել դրան. «Բայց եկեք այլ կողմից նայենք, ի՞նչ կանեինք մենք, եթե գազը լիովին առաքվեր Իրան կամ Ռուսաստան»:

Ասված է պարզ. որպեսզի Կասպից ծովի էներգակիրները լիովին չառաքվեն Իրան կամ Ռուսաստան, ամերիկյան ժողովրդավարությունը պատրաստ է «փոխզիջումային ելք պահպանվել» ԱՄՆ նավթագազային ընկերությունների համար: Այսինքն, թույլատրել, որպեսզի վերջիններս տնտեսական համագործակցություն ունենան Իրանի հետ:

Խնդիրն, իհարկե, այս մասնավոր դեպքը չէ միայն: Բաքվում Միացյալ Նահանգների դեսպանը սեփական երկրի շահերի պաշտպանության գործում ավելի առաջ է նայել: Նրա կարծիքով, քանի որ «Կասպյան տարածաշրջանի երկրների ծովային սահմանների հարցը չի լուծվում, իսկ արդեն 15-20 տարի է՝ իրականացվում է նավթարդյունահանում, ապա անդրկասպյան գազամուղի նախագիծը նույնպես կիրագործվի նույնիսկ առանց Թուրքմենստանի եւ Ադրբեջանի միջեւ համաձայնագրի ստորագրման» (տես՝ նույն տեղում):

Սա արդեն միջազգային ծովային իրավունքի բացահայտ անտեսման հորդոր է: Դեսպան Մորնինգսթարը, սակայն, «բացատրություն» ունի նաեւ այս դեպքի համար. «Եթե այդ նախագիծն իրականացվի Եվրոմիության հետ պայմանավորվածությունների շրջանակում, Միացյալ Նահանգները շատ ուրախ կլինի... Հույս ունեմ, որ այդ հարցը կլուծվի որոշակի ժամանակ անց» (նույն տեղում):

Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական վերադասավորումների հեռանկարն, այսպիսով, դառնում է ադրբեջանական կողմի թերեւս գլխավոր մտահոգությունը: Անդրադառնալով խնդրին, ռուսաստանցի քաղաքագետ Աբդուլ Նաղիեւը կարծիք է հայտնել, որ «չկա ռուս-ադրբեջանական հարաբերությունների խնդիր, գոյություն ունի Ադրբեջանի հանդեպ վերահսկողության ռուս-ամերիկյան մրցակցություն» (http://www.vesti.az/news/159557):

Նրա ընկալմամբ, «խնդիրը ծագել է Դմիտրի Մեդվեդեւի միջնորդության տապալմամբ, երբ Կրեմլին չհաջողվեց ադրբեջանական ղեկավարությանը համոզել, որպեսզի ուժի չկիրառման փաստաթուղթ ստորագրի՝ նախքան «Ադրբեջանի տարածքից օկուպացիոն ուժերի դուրսբերումը» (չակերտները մերն են- Վ. Ա.): Այսօր, ինչպես կարելի է ենթադրել դեսպան Մորնինգսթարի «իրատեսական» ձեւակերպումներից, պաշտոնական Բաքուն գրեթե լիովին ընկալունակություն է ցուցաբերում տարածաշրջանում ամերիկյան հետաքրքրությունների հանդեպ: Ամենայն հավանականությամբ, Ադրբեջանը դրա դիմաց ակնկալիքներ ունի:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԿԱՄՉԱՏԿԱ

# Ուժեղ երկրաշարժ Հեռավոր Արեւելքում

## *Ցնցումները զգացվել են նույնիսկ Մոսկվայում*




**Մայիսի 24-ի կեսօրին Օխոտի ծովում տեղի է ունեցել շատ ուժեղ երկրաշարժ, որի ցնցումները զգացվել են ոչ միայն Սիբիրում, այլեւ ՌԴ եվրոպական մասում: ԱՄՆ երկրաբանական ծառայության տվյալներով՝ ստորգետնյա ցնցումների էպիկենտրոնը եղել է Կամչատկա թերակղզուց արեւմուտք՝ Օխոտի ծովում, ավելի քան 600 կմ խորության մեջ: Ըստ ամերիկացի մասնագետների՝ ցնցման ուժգնությունը 8,3 մագնիտուդ է:**

**ՌԴ ԳԱ սիբիրյան բաժանմունքի տվյալներով՝ երկրաշարժն ունեցել է 8 մագնիտուդ: Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ ուժգին ցնցումից եւ հետցնցումներից հետո Սախալինի եւ Կուրիլների օխոտյան ափերին հայտարարվել է ցունամիի վտանգ, սակայն մեկ ժամ հետո տագնապի ռեժիմը չեղյալ է հայտարարվել:**

**ՌԴ ԳԱ Երկրաշարժերի կանխատեսման եւ մաթեմատիկական երկրաֆիզիկայի տեսության միջազգային ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Սոլովյովը նշում է, որ 600 կմ խորության մեջ գտնվող էպիկենտրոնի պատճառով ցնցումները զգացվում են մեծ հեռավորությունների վրա: Կրասնոյարսկում ցնցումների ուժը կազմել է 1,5-2 բալ: Նույնիսկ Մոսկվայում հողի տատանումների ամպլիտուդը կազմել է 1-1,5 բալ: Բարձրահարկ շենքերում ցնցումները զգալի են եղել: Որոշ դեպքերում մարդկանց տարհանել են: Սակայն ՌԴ տարածաշրջաններից ավերածությունների կամ զոհերի վերաբերյալ հաղորդումներ չեն ստացվել:**

**Մոսկվայում ամենաուժեղ ցնցումն արձանագրվել էր 1977 թ. մարտի 4-ին (3-4 բալ): Դա պայմանավորված էր Բուխարեստի կամ Կարպատների երկրաշարժով, որը զգալի վնասներ պատճառեց Ռումինիային:**

# Իսրայելը դաշնակիցներ է գտել Սիրիայում



**Իսրայելի իշխանությունները սկսել են ոչ պաշտոնական կապեր հաստատել Գոլանի բարձունքների սիրիական կողմում գտնվող գյուղերի բնակիչների հետ, գրում է «Նյու Յորք թայմս» թերթը՝ վկայակոչելով երուսաղեմյան աղբյուրներ:**

**Այդ տվյալների համաձայն՝ իսրայելցիները կապեր են հաստատում դրուզների հետ, որոնք Սիրիայի քաղաքացիական պատերազմում չեն պաշտպանում ո՛չ Բաշար Ասադին, ո՛չ էլ ապստամբներին:**

**Սիրիայի սահմանամերձ շրջանների եւ ամբողջ երկրի իրադրությանը վերաբերող հետախուզական տվյալների դիմաց դրուզներն Իսրայելից ստանում են մարդասիրական օգնություն:**

**Թերթը հավելում է, որ պաշտոնական Երուսաղեմը առայժմ բացառում է իր նորահայտ դաշնակիցներին զինելու հնարավորությունը: Սիրիայի տարածքում բուֆերային գոտու ստեղծման տարբերակը նույնպես չի քննարկվում, քանի որ տվյալ ոլորտում ձեռնարկված նախորդ փորձերը (օրինակ՝ 1980-ականների Լիբանանում) խիստ անհաջող են եղել:**

**Իսրայելի պաշտոնական անձինք պարզաբանել են, որ Սիրիայի հակամարտությանը չմիջամտելու քաղաքականությունը մնում է ուժի մեջ, բայց ամեն պահի կարող է փոխվել, քանի որ իրավիճակն արագորեն դուրս է գալիս վերահսկողությունից: Վերջին վտանգավոր զարգացումը դարձավ լիբանանյան «Հզբոլլահ» շարժման մասնակցությունը Սիրիայի պատերազմին:**

**Երուսաղեմում մի կողմից դժգոհում են Դամասկոս-«Հզբոլլահ»-Իրան սերտ կապերի պահպանումից, իսկ մյուս կողմից վախենում են սուննի արմատական իսլամիստների հաղթանակից, ինչը կառաջացնի քաոս, զանգվածային բնաջնջման զենքի տարածում եւ Սիրիան կդարձնի արմատական իսլամական էմիրություն:**

**Ավելի վաղ հաղորդվել էր, որ իսրայելական հատուկ ջոկատները արդեն ինչ-ինչ գաղտնի առաքելություններ են կատարում Սիրիայի տարածքում: Բացի դրանից, իսրայելական ռազմօդանավերը մայիսի սկզբներին մի շարք հարվածներ էին հասցրել Դամասկոսի շրջակա թիրախներին: Այն ժամանակ ոչ պաշտոնական աղբյուրները հայտնել էին, թե թիրախները լիբանանցի գրոհայինների համար նախատեսված զինապահեստներն են:**

# Հայաստան է ժամանում Ուելսի արքայազնը

Նորին արքայական մեծություն Ուելսի արքայազնը կայցելի Հայաստան եւ կլինի «Երեւան, իմ սեր» բարեգործական հիմնադրամի հյուրը: Այս մասին տեղեկացանք Երեւանում բրիտանական դեսպանատնից:

Արքայազն Չարլզը Հայաստանում կլինի մայիսի 28-30-ին: Նա արքայական ընտանիքի առաջին անդամն է, որ մասնավոր այցելություն կկատարի Հայաստանի Հանրապետություն: Նա կայցելի Հայաստանի պատմական հուշարձանները, Մատենադարան, ներկա կգտնվի գալա-համերգին եւ ընթրիքին, որոնք տրվելու են ի նպաստ մայրաքաղաքի մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված բարեգործական աշխատանքին:

Ի դեպ, «Երեւան, իմ սեր» ծրագրի հիմնադիրը Արմեն Սարգսյանն է՝ Հայաստանի նախկին վարչապետը եւ նախկին Խորհրդային Միությունից անկախացած Հայաստանի առաջին դեսպանը Լոնդոնում:

«Երեւան, իմ սեր» ծրագիրը շատ նման է Շոտլանդիայի «Դամֆրիների տուն» բարեգործական ծրագրին, որին անձամբ աջակցում է Ուելսի արքայազնը: «Դամֆրիների տունը» ոչ միայն վերստեղծում է շրջակա միջավայրը, այլեւ որպես ժառանգություն փոխանցում ապագա սերունդներին:

Ուելսի արքայազնը Արմեն Սարգսյանի հետ հանդիպում կունենա նաեւ նախագահ Սերժ Սարգսյանի հետ, ինչպես նաեւ կայցելի Մայր աթոռ Սուրբ Էջմիածին:

Ի. Պ.

# Ընդդիմությունն Ասադին հորդորում է հեռանալ 20 օրվա ընթացքում

**Սիրիական ընդդիմության առաջնորդ Մուազ ալ Խաթիբը նախագահ Բաշար Ասադին կոչ է արել հնարավորինս շուտ թողնել պաշտոնը: «Քոլ Իսրայել» ռադիոկայանի տվյալներով, ընդդիմադիրն Ասադին առաջարկել է 20 օրվա ընթացքում հրաժարվել իշխանությունից:**

**Ասադին առաջարկվում է իշխանությունը փոխանցել վարչապետին կամ փոխնախագահին եւ լքել երկիրը 500 ազգականների ու մերձավորների հետ:**

**Հակառակ դեպքում ընդդիմադիրները կշարունակեն ռազմական գործողությունները «մինչեւ ամբողջ Դամասկոսի գրավումը»:**

**Այս կոչի նախօրեին Գերմանիայի BND հետախուզությունը տեղեկացրել էր Սիրիայի կառավարական զորքերի վերջին նշանակալի հաջողությունների ու հաղթանակների մասին: Խոսքը մասնավորապես ռազմավարական կենտրոն Քուսեյրի ճակատամարտի մասին է, որին «Ազգը» անդրադարձել է: Բանակը կարողացել է կարգավորել մատակարարումը առաջավոր գծում, ինչպես նաեւ կտրել է ապստամբների հաղորդակցության գծերը: Ինչպես ասում են՝ ապստամբները փորձում են կառչել փրփուրներից:**

# Գուանտանամոյի կալանավորների մեծ մասին կտեղափոխեն Եմեն

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման չեղյալ է հայտարարել Գուանտանամոյի ռազմակայանի բանտի կալանավորներին Եմեն տեղափոխելու վրա ավելի վաղ իր սահմանած արգելքը: Այդ մասին նա հայտնել է Վաշինգտոնի Ազգային պաշտպանության համալսարանում ունեցած ելույթի ժամանակ:**

**Աստիճանաբար պետք է փակել Գուանտանամոյի բանտը... Ասոշիեյթեդ պրես գործակալությունը Օբամայի որոշումը շաղկապում է 2012-ից Եմենի նախագահի պաշտոնը զբաղեցնող Աբդ ալ Ռահման Մանսուր ալ Խադիի ստանձնած այն պարտավորության հետ, որ ինքը կամրապնդի երկրի անվտանգությունը: Բացի դրանից, տեղափոխման արգելքի վերացումը հերթական քայլն է Գուանտանամոյի բանտը փակելու ճանապարհին, քանի որ այնտեղ պահվող 166 կալանավորներից 90-100-ը ծնունդով եմենցի են:**

**Օբաման կալանավորներին Եմեն տեղափոխելն արգելել էր 2010-ի հունվարին այն բանից հետո, երբ «Ալ Ղաիդայի» եմենյան բաժանմունքի հանձնարարությամբ մի մահապարտ փորձել էր պայթեցնել դեպի ԱՄՆ թռչող օդանավը:**

**Եմենի իշխանություններն արդեն հավանություն են տվել արգելքը վերացնելու Օբամայի որոշմանը եւ հավաստիացրել են, որ կհամագործակցեն ԱՄՆ-ի հետ եւ անհրաժեշտ ամբողջ աշխատանքը կկատարեն ենթադրյալ ահաբեկիչներին բնականոն խաղաղ կյանքի վերադարձնելու համար:**

ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ-Ի

# «Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային հոբելյանական` 10-րդ կինոփառատոնը կմեկնարկի հուլիսի 7-ին

**ՀՀ մշակույթի նախարարությունում երեկ կայացել է «Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային հոբելյանական` 10-րդ կինոփառատոնին նվիրված առաջին մամուլի ասուլիսը: Համատեղ մամուլի ասուլիսին մասնակցել են ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, «Ոսկե ծիրան» կինոփառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանը, փառատոնի ծրագրերի տնօրեն Միքայել Ստամբոլցյանն ու գեղարվեստական ղեկավար Սուսաննա Հարությունյանը:**

**«Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային 10-րդ կինոփառատոնը կկայանա հուլիսի 7-ից 14-ը: Այս տարի եւս փառատոնի կողքին են գլխավոր հովանավոր, բաժանորդի ազատ ընտրությունը քաջալերող ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը եւ ՀՀ մշակույթի նախարարությունը: «Ոսկե ծիրանի» համար 2013 թվականն առանձնահատուկ է` հոբելյանական: Փառատոնին կհյուրընկալվեն կինոյում մեծ վաստակի համար «Փարաջանովյան թալերի» արժանացած նշանավոր կինոգործիչներ Քշիշտոֆ Զանուսին, Գոդֆրի Ռեջիոն եւ Յոս Ստելինգը: Շառլ Ազնավուրի անվան հրապարակում կտեղադրվի աշխարհահռչակ շանսոնյե, կինոդերասան Շառլ Ազնավուրի աստղը:**

**Փառատոնն այս տարի ստացել է շուրջ 1200 հայտ` աշխարհի 94 երկրից (2012թ.-ին` 67 երկիր), ինչը փաստում է, որ «Ոսկե ծիրանի» հանդեպ հետաքրքրությունը տարեցտարի մեծանում է: «Ոսկե ծիրան» կինոփառատոնն այս տարի եւս կներկայանա լիամետրաժ, վավերագրական եւ «Կոռիզ» կարճամետրաժ ֆիլմերի միջազգային մրցութային ծրագրերով, ինչպես նաեւ «Հայկական համայնապատկեր» ազգային մրցութային ծրագրով: Մրցութային ծրագրերում ընդգրկված ֆիլմերը գնահատելու է չորս ժյուրի: «Խաղարկային ֆիլմերի միջազգային մրցույթի» ժյուրին կգլխավորի հունգարացի ականավոր կինոռեժիսոր, համաշխարհային կինոյի դասական Իշտվան Սաբոն, իսկ «Վավերագրական ֆիլմերի միջազգային մրցույթի» ժյուրին կգլխավորի 2012թ.-ի «Ոսկե ծիրանի» դափնեկիր, նշանավոր կինոռեժիսոր Սերգեյ Լոզնիցան: Փառատոնի օրերին կաշխատեն նաեւ Կինոգետների եւ կինոքննադատների միջազգային ֆեդերացիայի (ՖԻՊՐԵՍՍԻ) եւ Էկումենիկ ժյուրին: Հարուստ են «Ոսկե ծիրանի» արտամրցութային ծրագրերը: Դրանց թվում առանձնակի նշանակություն ունեն «Երեւանյան պրեմիերաներ», «Հետահայաց ցուցադրություններ» եւ «Հարգանքի տուրք» ծրագրերը, որոնցում անակնկալներ են սպասվում համաշխարհային կինոյի վարպետներից: Փառատոնի շրջանակում հարգանքի տուրք կմատուցվի Արամ Խաչատրյանի 110, Արտավազդ Փելեշյանի եւ Ներսես Հովհաննիսյանի 75-ամյակների առթիվ:**

**«Արվեստը ձգտում է ազատության: Որպես երեւակայականի արվեստ, կինոն հսկայական դեր է կատարում անհատի կրթության եւ զարգացման գործում: Հետեւաբար` Հայաստանում կինոարվեստի սիրահարների համար բացառիկ արժեք ունեցող, առավել նրբաճաշակ, հետաքրքրական եւ լուրջ ֆիլմերը հասանելի դարձնելն աջակցության արժանի կարեւորագույն գործ է: Մյուս կողմից, «Ոսկե ծիրան»-ի շնորհիվ Հայաստանի երիտասարդությունը սկսել է ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել կինոարվեստի եւ կինոարտադրության հանդեպ: ՎիվաՍել-ՄՏՍ-ի համար «Ոսկե ծիրան»-ի առաքելությունը չի սահմանափակվում կինեմատոգրաֆիկ նշանակությամբ. կինոփառատոնը կարեւոր քայլ է աշխարհի մշակութային քարտեզի վրա Հայաստանի ուրույն տեղն ամրապնդելու ուղղությամբ», - նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**«Ոսկե ծիրան» հոբելյանական տասներորդ կինոփառատոնը կլուսաբանեն ոչ միայն Հայաստանի ԶԼՄ-ները, այլեւ միջազգային ճանաչում ունեցող հեռուստաալիքներ եւ պարբերականներ: Մասնավորապես` «Euronews», «Культура» հեռուստաալիքները, «The National»-ը, «Sight and sound»-ը եւ այլն:**

**Մինչեւ փառատոնի մեկնարկը, միջազգային բարձրակ մասնագետների եւ Արեւելյան գործընկերության երկրներից ժամանած երիտասարդ կինոգետների, կինոքննադատների մասնակցությամբ նախատեսվում է իրականացնել նաեւ դասընթաց` «Կինոլրագրություն առանց սահմանների» խորագրով: Փառատոնի օրերին համատեղ ուժերով կտպագրվի «Ոսկե ծիրան» ամենօրյա պարբերականը:**

*«Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային կինոփառատոնի մամլո ծառայություն*

# Կրթաթոշակների դիմումների ընդունում

Գլենդեյլից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ «Հայկական կրթական հաստատությունը» (Armenian Eductional Foundation) սկսել է դիմումների ընդունումը Ռիչարդ Թուֆենկյան կրթաթոշակի համար: 2013-14 ուստարվա համար նախատեսված է 2,500 դոլարի չափով հինգ կրթաթոշակ հատկացնել այն հայ ուսանողներին, որոնք ցանկանում են իրենց բարձրագույն ուսումը շարունակել հավատարմագրված որեւէ քոլեջում կամ համալսարանում (Հայաստանում թե Ամերիկայում): Դիմողները պարտավոր են ներկայացնել կիսամյակային գնահատականների նվազագույնը 3,0 չափանիշ (GPA), տեղեկանք ընտանիքի ֆինանսական դրության եւ ակտիվ հասարակական գործունեության մասին:

Դիմումները ուղարկել AEF-ի գրասենյակ «600 West Broadway, Suite 13, Glendale, CA 91204» հասցեով ոչ ուշ, քան հուլիսի 31-ը (փոստային նշումով):

Ռիչարդ Թուֆենկյան կրթաթոշակի հիմնադրամը ստեղծել են Ռալֆ եւ Սավի Թուֆենկյանները ի հիշատակ իրենց որդու: 1991-ից ի վեր հիմնադրամը 293,270 դոլար է հատկացրել այդ նպատակի համար:

Հ. Ծ.

# Բուրջի տաճարին մէջ

## *«Սարգիս ծառայ Աստուծոյ...»*

Ֆրանսայի հին գաւառներէն 18-րդն է Բերրին (Berry): Շերի նահանգը մաս կը կազմէ անոր, իսկ Բուրժ (Bourges) քաղաքը մայրաքաղաքն է Շերի (Cher), որ դարձած է 12-դարուն Շառլ (Կառլոս) 7-րդ թագաւորին նստավայրը:

Բուրժ զինուորական ճարտարուեստի կեդրոն է, նաեւ մշակութային քաղաք մը իր հինգ թանգարաններով.

1- Ֆրանսայի գեղեցկագոյն Սենթ Էթիէն տաճարին մէջ, կառուցուած 1195- 1324 թուականներուն, տեղի կ'ունենան, ամէն գարնան, դասական երաժշտութեան սօնահանդէսներ: Ընթացիկ մայիս ամսուան 19-ին Մոցարտի գլուխգործոցը` Ռեքվիէմը (Requiem) նուագուեցաւ 150 երաժիշտներու եւ երգիչներու կողմէ:

2- Շառլ 7-րդ թագաւորի ֆինանսական մատակարար Ժակ Քէօրի (Jacques Coeur) պալատը, որ ճարտարապետական գոհար մըն է:

3- Բերրիի գաւառի ազգագրական թանգարանը:

4- Վերացապաշտ նկարիչ` Մորիս Էստեւի (Maurice Este`ve) թանգարանը: Էստեւ ծնած է 1904-ին ու մահացած 2001-ին:

5- Զարդարուեստի թանգարանը:

Պատմականօրէն եւս կան տուեալներ Բուրժ քաղաքի հետ կապուած. հոն ապրած է Ժան դը Ֆրանս` Բերրիի դուքսը (1340-1416): Ան հոգացած է Սենթ Էթիէն տաճարի վիտրայներուն ծախսերը, որոնք գեղեցկագոյններն են Ֆրանսայի տաճարներուն:

Նշանաւոր գրագիտուհի Ժորժ Սանդ (Georges Sand) հեղինակած է Բերրի գաւառի մասին գրութիւններ եւ կը նկատուի բերրիցի ամենասիրուած գրողը: Ծնած է 1804ին եւ մահացած 1878-ին: Եղած է սիրուհին բանաստեղծ Ալֆրէդ Միւսէի եւ Ֆրեդերիկ Շոփէնի:

* * *

Ընթացիկ տարուան մայիսի սկիզբը Բուրժ գտնուեցայ երեք օրուան համար, ուր որդիս` Ստեփանը, բնակութիւն հաստատած է իր կնոջ եւ տղուն հետ: Ստեփան կ'ուզէր կարծիքս իմանալ իր վերջին գործերուն մասին. նկարազարդած էր երկու կարեւոր գիրքեր եւ ունէր բազմաթիւ նոր իւղանկարներ: Առաջին գիրքին հեղինակն է Փոլ Փոլանսկին, երկրորդինը` Ֆիլիպ Դորմոյը, որ Շէյքսպիրի «Լիր Արքայի» հետեւողութեամբ գրած է ընկերային խորքով գիրք մը, իտալերէն լեզուով: (Ֆիլիպ Հռոմի մէջ տուած է ասմունքի ցերեկոյթ մը «Վալէ» թատրոնին մէջ, իտալացի դերասաններու ընկերակցութեամբ, 1500 հոգիի ներկայութեան: Ստեփան մեկնած է հեղինակին հետ Հռոմ եւ թատրոնի մուտքին ցուցադրած է իր նկարները):

Բուրժ հասնելուս երկրորդ օրը Ստեփան ըսաւ. «Քեզի պիտի ծանօթացնեմ հայաստանցի հայու մը, որ Ֆրանսա եկած է բուժուելու համար: Արհեստով ձուլագործ է եւ աւարտած` Երեւանի Գեղարուեստա-թատերական ինստիտուտի նկարչական բաժինը: Սքանչելի անձ մըն է»: Հեռաձայնով ժամադրուեցաւ հետը քաղաքին մէջ` սրճարան մը: Կէս ժամ ետք ծանօթացանք իրարու, Բուրջի տաճարին մօտիկ:

Սամուէլ Նազարեան, 60-ի մօտ, խոնարհ տեսքով եւ նոյնքան խոնարհ հոգիով հայ մըն է: Ֆրանսա եկած է կզակի ոսկորի տեղադրման համար: Հայաստան կատարած էին առաջին վիրահատութիւնը, սակայն չէր յաջողած: Երկրորդը կատարած է ֆրանսացի մասնագէտ մը, արդիւնքը գոհացուցիչ է: Ֆրանսական պետութիւնը հինգ տարուան բուժման արտօնութիւն տուած է իրեն: Սամուէլ իր կնոջ հետ կ'ապրի Բուրջի մէջ:

Համակրելի այս հայը առաջին մէկ վայրկեանէն գրաւեց սիրտս, դարձանք հարազատ բարեկամներ: Այն երկու օրերու ընթացքին, որ առիթ ունեցանք զիրար տեսնելու, մենք մեզ Երեւանի մէջ կը զգայինք: Մեր խօսակցութեան նիւթը հայութեան եւ Հայաստանի մասին էր...:

Երբ սրճարանէն դուրս ելանք, խնդրեցի Ստեփանէն, որ Սենթ Էթիէն տաճար մտնէինք հայերէն գրութիւնը տեսնելու համար:

Մտանք տաճար: Խորհրդաւոր մթնոլորտ մը կը տիրէր: Ստեփանին հետ երկու տարի առաջ տեսած էինք այդ փորագրութիւնը, որ հաստաբուն սիւնի մը վարի մասին վրայ էր, սակայն դիւրին չեղաւ զայն գտնելը: Ստեփանն ու իր տղան աչքէ կ'անցնէին սիւները, մինչ ես ու Սամուէլ հմայուած եռանաւ գոթական այս կառոյցի բարձրութեամբ, վիտրայներով ու առաստաղով` կը շարունակէինք շրջիլ լռութեամբ, երբ թոռնիկս վազելով եկաւ ու ըսաւ. «գտանք», «գտանք»...: Մօտեցանք սիւնին, ուր Ստեփան, փորագրութեան վրայ փակցուած թուղթը կը մաքրէր: Ո՞վ գիտէ, ո՛ր անշնորհքը փակցուցած է, ըսի:

- Ով պիտի ըլլայ, եթէ ոչ քաղաքին մէջ ապրող թուրքերէն մին,- պատասխանեց որդիս: Սամուէլ գրպանէն հանելով թաշկինակը, սկսաւ սրբել սիւնի վրայի փոշին: Գիրը յստակ կ'երեւէր հիմա. թեքեւօրէն փորագրուած էր.

Ո՞վ էր արդեօք Սարգիս: Ե՞րբ էր փորագրած: Ո՞ւրկէ էր եկած:




Չգիտցանք: Ենթադրեցինք, որ տաճարի կառուցման մասնակցող արհեստաւոր մը կրնար ըլլալ եւ կամ ուխտաւոր մը, որ եկած էր Ամենակալին յայտնելու իր խոնարհումը:

- Ով որ ալ ըլլայ, մատաղ իր հոգուն,- ըսաւ Սամուէլ յուզուած:

Նկարուեցանք սիւնին առջեւ ու դուրս ելանք երկիւղածութեամբ: Այդ պահուն յիշեցի Ուիլիմ Սարոյեանի խօսքը. «Երբ երկու հայ իրարու հետ հայերէն կը խօսին, հոն Հայաստան է...»:

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՐՈՍԵԱՆ**
**Բուրժ, 17 մայիս, 2013**



*Սենտ Էթիենի տաճարը*

# ՅՈՒՆԻՍԵՖ մանկական նվագախմբի ելույթը Եվրոպայի օրվա առթիվ

Եվրոպայի օրը մեծ հանդիսավորությամբ նշվեց Արամ Խաչատրյան համերգասրահում` ՅՈՒՆԻՍԵՖ մանկական նվագախմբի կատարմամբ:

Ինչպես նշեց ՅՈՒՆԻՍԵՖ մանկական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը, մարդկանց, պետություններին համախմբում է արվեստը. «Շատ ուրախ եմ, որ այս ամենը միավորում է արվեստը եւ ոչ թե քաղաքականությունը, ինչի մասին միշտ խոսում են: Մանկական նվագախմբի երեխաները նոր են սկսում իրենց մասնագիտական ուղին, եւ նրանք ունեն բարձր պրոֆեսիոնալիզմ ու կատարողական վարպետություն, ինչը մեր կրթական համակարգի արդյունքն է»: Ի դեպ, համերգի առաջին ստեղծագործությունը պրեմիերա էր. այն խորվաթ կոմպոզիտորի կողմից գրվել է հատուկ այս համերգի համար

Նվագախումբը հանդիսատեսին ներկայացրեց Եվրոպական միության անդամ պետությունների ավանդական երաժշտության գեղեցիկ կատարումներ, ինչպես նաեւ հնչեցին հայ կոմպոզիտորների` Էդվարդ Միրզոյանի, Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները:

Համերգին ներկա էին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանը, դեսպաններ եւ այլք:

Ներկաներին ողջունեցին եւ Եվրոպայի օրվա առթիվ շնորհավորեցին Հայաստանում Եվրոմիության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիստեա եւ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Նշենք, որ ՅՈՒՆԻՍԵՖ մանկական կամերային նվագախումբը հիմնվել է Սերգեյ Սմբատյանի կողմից` 2009 թվականին եւ բազմաթիվ ելույթներով հանդես է եկել Հայաստանում ու Եվրոպայում:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

# Մարզական

## Գերմանական եզրափակիչն «Ուեմբլիում» մեծ հետաքրքրությամբ է սպասվում

Այսօր Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում հայտնի կդառնա չեմպիոնների լիգայի 2012/13-ի խաղարկության հաղթողը: Պատվավոր մրցանակի համար մրցավեճի կբռնվեն գերմանական 2 հզոր ակումբները՝ Մյունխենի «Բավարիան» եւ Դորտմունդի «Բորուսիան»:

Չեմպիոնների լիգայի պատմության մեջ դա կլինի 4-րդ եզրափակիչը, որում կմրցեն միեւնույն երկրի թիմերը: Առաջին անգամ դա տեղի էր ունեցել 2000-ին, երբ Մադրիդի «Ռեալը» հաղթել էր «Վալենսիային»: 2003-ին իտալական «Միլանի» եւ «Յուվենտուսի» մրցավեճն ավարտվել էր միլանցիների հաղթանակով: Իսկ 2008-ին «Մանչեսթր Յունայթեդն» ուժեղ էր գտնվել «Չելսիից»:



«Բավարիայի» համար հերթական եզրափակիչը հոբելյանական է՝ 10-րդը չեմպիոնների լիգայում: «Բավարիան» առայժմ 4 անգամ է տիրել չեմպիոնների գավաթին, ընդ որում 1973-1975-ին 3 տարի անընդմեջ հաղթող է ճանաչվել: 1975-ին գավաթի նվաճման ճանապարհին «Բավարիան» դժվարությամբ հաղթահարել էր «Արարատի» դիմադրությունը: Մյունխենում կայացած առաջին խաղում գերմանացիները հաղթել էին 2-0 հաշվով, իսկ Երեւանում «Արարատին» հաղթանակ էր պարգեւել Արկադի Անդրեասյանի խփած միակ գնդակը:

Վերջին հաջողությանը չեմպիոնների լիգայում «Բավարիան» հասել է 2001-ին՝ 11 մ հարվածներով հաղթելով «Վալենսիային» (հիմնական ժամանակում՝ 1-1): Դրանից հետո «Բավարիայի» համար անհաջող են դասավորվել 2 եզրափակիչները: 2010-ին գերմանական ակումբը 0-2 հաշվով զիջել է «Ինտերին», իսկ անցյալ տարի 11 մ հարվածներով պարտվել է «Չելսիին» (հիմնական ժամանակում՝ 1-1):

Եթե «Բավարիային» հաջողվի հաղթել եզրափակիչում, ապա թիմը 5-րդ անգամ կդառնա չեմպիոնների գավաթակիր եւ այդ ցուցանիշով կհավասարվի «Լիվերպուլին»: Թիմի գլխավոր մարզիչ Յուպ Հայնկեսն էլ կդառնա չեմպիոնների գավաթը 2 անգամ նվաճած 19-րդ մարզիչը: Նրա գլխավորությամբ 1998-ին պատվավոր մրցանակը շահել էր «Ռեալը»: «Բավարիան» եվրոգավաթներում հաջողության է հասել նաեւ գավաթակիրների գավաթի (1967-ին) եւ ՈւԵՖԱ-ի գավաթի (1996-ին) մրցաշարերում:

Դորտմունդի «Բորուսիան» 2-րդ անգամ է հանդես գալու չեմպիոնների լիգայի եզրափակիչում: Առայժմ միակ եզրափակիչը հաջողությամբ է պսակվել «Բորուսիայի» համար: 1997-ին «Բորուսիան» Մյունխենում 3-1 հաշվով պարտության է մատնել «Յուվենտուսին»: Այդ տարի թիմը մարզում էր Օտմար Հիտցֆելդը, որի գլխավորությամբ հետագայում 1999-ին եւ 2001-ին չեմպիոնների լիգայի եզրափակիչում հանդես էր եկել «Բավարիան»:

Հերթական եզրափակիչը 5-րդն է «Բորուսիայի» համար եվրոգավաթներում: 1966-ին թիմը նվաճել է գավաթակիրների գավաթը, իսկ 1992-ին եւ 2002-ին անհաջողության էր մատնվել ՈւԵՖԱ-ի գավաթի մրցաշարի վճռորոշ խաղում:

«Բորուսիան» այսօրվա եզրափակիչ խաղում կազմի հետ կապված լուրջ կորուստ կունենա: Վճռորոշ խաղին չի մասնակցի թիմի առաջատար ֆուտբոլիստներից մեկը՝ 20-ամյա կիսապաշտպան Մարիո Գյոտցեն, որը «Ռեալի» հետ ապրիլի 30-ին կայացած կիսաեզրափակիչ խաղում վնասվածք էր ստացել: Նա թիմի հետ մեկնել է Լոնդոն՝ պահեստայինների նստարանից աջակցելու թիմակիցներին:

Եվրոգավաթներում «Բավարիայի» եւ «Բորուսիայի» միջեւ մինչեւ օրս միայն 2 հանդիպում է կայացել՝ 1998-ին չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչում: Մյունխենում դարպասները մնացել են անառիկ, իսկ պատասխան խաղում «Բորուսիան» հաղթել է 109-րդ րոպեին Ստեֆան Շապյուիզայի խփած միակ գոլի շնորհիվ:

Լոնդոնի հանրահայտ «Ուեմբլի» մարզադաշտը 8-րդ անգամ կհյուրընկալի չեմպիոնների լիգայի եզրափակիչ խաղի մասնակիցներին: Առաջին եզրափակիչը կայացել է ուղիղ 50 տարի առաջ՝ 1963-ին, որում «Միլանը» 2-1 հաշվով հաղթել է «Բենֆիկային»: Վերջին անգամ Լոնդոնում չեմպիոնների գավաթը վիճարկվել է 2011-ին: Վճռորոշ հանդիպումն ավարտվել է «Մանչեսթր Յունայթեդի» նկատմամբ «Բարսելոնի» տարած հաղթանակով՝ 3-1: «Բարսելոնը» 2-րդ անգամ էր «Ուեմբլիում» հաջողության հասնում: 1992-ին կատալոնական ակումբը 1-0 հաշվով հաղթել էր «Սամպդորիային»:

Չեմպիոնների լիգայի եզրափակիչ հանդիպումը հսկայական հետաքրքրություն է առաջացրել ֆուտբոլասերների շրջանում: Մարզադաշտի 86 հազար տոմսերն արդեն վաճառվել են: Դրանք կարելի է ձեռք բերել միայն «սեւ շուկայում»: Ամենաէժան տոմսը 4,5 հազար ֆունտ ստեռլինգ է, ինչը 38 անգամ գերազանցում է պաշտոնական գինը: Իսկ որոշ գերմանացի ֆուտբոլասերներ էլ 2 տոմսի համար 14 հազար ֆունտ ստեռլինգ են վճարել վերավաճառողներին: Սպասվում է, որ խաղի օրը տոմսերի գինն ավելի կթանկանա «սեւ շուկայում»:

Բուքմեյքերները եզրափակիչում նախապատվությունը տալիս են «Բավարիային», որի հաղթանակի համար խաղադրույքներ են ընդունվում 1,71 գործակցով: «Բորուսիայի» հաղթանակի գործակիցը 4,6 է, իսկ ոչ-ոքին գնահատվում է 3,9 գործակցով:

## Մրցավայրերը հայտնի են

**ՈւԵՖԱ-ի գործադիր կոմիտեի նիստում հաստատվել են 2014/15-ի մրցաշրջանի չեմպիոնների լիգայի եւ Եվրոպայի լիգայի եզրափակիչ հանդիպումների անցկացման մրցավայրերը:**

**Չեմպիոնների լիգայի վճռորոշ հանդիպումը 2015-ի մայիսին տեղի կունենա Բեռլինի «Օլիմպիաշտադիոնում»: Բեռլինն առաջին անգամ է հյուրընկալելու չեմպիոնների լիգայի եզրափակիչի մասնակիցներին: Բեռլինը կդառնա 13-րդ քաղաքը, որտեղ կանցկացվի չեմպիոնների լիգայի եզրափակիչը: Նախկինում Գերմանիայում չեմպիոնների լիգայի վճռորոշ հանդիպումներ անցկացվել են Շտուտգարտում, Մյունխենում եւ Հելզենկիրհենում:**

**Եվրոպայի լիգայի եզրափակիչ խաղը կկայանա Վարշավայի ազգային մարզադաշտում, որտեղ 2012-ին անցկացվել էին Եվրոպայի առաջնության հանդիպումները:**

## Ռունին չի վաճառվում

**«Մանչեսթր Յունայթեդի» հարձակվող Ուեյն Ռունին ակումբի ղեկավարությանը խնդրել է իրեն տրանսֆերի հանել: Նա ցանկանում է հեռանալ թիմից, վախենալով, որ Ալեքս Ֆերգյուսոնին փոխարինող մարզչի օրոք ինքը մշտական տեղ չի ունենա «Մանչեսթր Յունայթեդի» մեկնարկային կազմում: Սակայն ակումբի ղեկավարությունը մերժել է Ռունիի խնդրանքը ու հայտարարել, որ նա չի վաճառվում: Ռունին մինչեւ 2015-ի ամառ պայմանագիր ունի «Մանչեսթր Յունայթեդի» հետ:**

**Ընթացիկ առաջնությունում Ռունին 27 խաղում 12 գոլ է խփել, դարձել է գոլային 10 փոխանցման հեղինակ:**

**Ռունիի ծառայություններով հետաքրքրված է «Չելսին», որը պատրաստ է 25 մլն ֆունտ ստեռլինգ վճարել «Մանչեսթր Յունայթեդին» ֆուտբոլիստին գնելու համար: Ռունիին իրենց կազմում ցանկանում են տեսնել նաեւ ՊՍԺ-ն ու «Բավարիան»:**

## Տոմսերի գինն անփոփոխ է

**Այսօրվանից վաճառքի կհանվեն հունիսի 7-ին Երեւանում կայանալիք Հայաստան-Մալթա ընտրական մրցախաղի տոմսերը: Ամենաթանկ տոմսերը (8 հազար դրամ) նախատեսված են «Հանրապետական» մարզադաշտի արեւմտյան տրիբունայի համար: Արեւելյան տրիբունայում տեղ զբաղեցնելու համար հարկ կլինի վճարել 5 հազար դրամ, իսկ հարավային եւ հյուսիսային տրիբունաների տոմսերի գինը 3 հազար դրամ է:**

### ՖՈՒՏԲՈԼ

## «Անժին» եւս հետաքրքրվում է Օզբիլիսով

**ՀՀ հավաքականի եւ Կրասնոդարի «Կուբանի» կիսապաշտպան Արաս Օզբիլիսով սկսել է հետաքրքրվել նաեւ Մախաչկալայի «Անժին», որը ՌԴ առաջնության բրոնզե մրցանակակիրն է: Մինչ այդ հայ ֆուտբոլիստը հետաքրքրել էր նաեւ Մոսկվայի «Դինամոյին» ու «Սպարտակին» եւ Կազանի «Ռուբինին»: Թեեւ օրերս «Սպարտակի» գլխավոր մարզիչ Վալերի Կարպինը հերքել էր այդ լուրը:**

## Գերմանացի հրաձիգը կներկայացնի Հայաստանը




**Այսօր Մյունխենում մեկնարկում է հրաձգության աշխարհի գավաթի խաղարկության 3-րդ փուլը, որին կմասնակցեն Հայաստանը ներկայացնող 4 հրաձիգներ: Նրանցից մեկը՝ Քրիստիան Լաուերը գերմանացի է: Նա մեր մարզուհու՝ Իրինա Աղաջանյանի ամուսինն է եւ այսուհետ հանդես է գալու Հայաստանի դրոշի ներքո: Իրինան Մյունխենում հանդես կգա օդամուղ հրացանով 10 մ-ից հրաձգության մրցումներում, իսկ նրա ամուսինը բացի այդ մրցաձեւից, ուժերը կչափի նաեւ հրացանով 50 մ-ից հրաձգությունում: Մյունխենում Հայաստանը կներկայացնեն նաեւ Սվետլանա Տիգրանյանն ու Հրաչիկ Բաբայանը:**

## Պատանեկան հավաքականը զիջեց «Ալաշկերտին»

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականն Աբրահամ Խաշմանյանի գլխավորությամբ ուսումնամարզական հավաք է անցկացնում Ավանի ֆուտբոլի ակադեմիայում: Հավաքականը նախապատրաստվում է աշնանը կայանալիք Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարին:

Հավաքի շրջանակներում պատանեկան հավաքականն ընկերական խաղ անցկացրեց բարձրագույն խմբի ուղեգիր նվաճած Մարտունու «Ալաշկերտի» հետ ու պարտվեց 0-1 հաշվով: Այսօր հավաքականն ընկերական խաղում ուժերը կչափի «Արարատի» հետ:

## Տարաձայնություններ դոպինգ ստուգման հարցում




Գերծանրքաշային կարգում WBC-ի, IBF-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն կարող է հրաժարվել Ալեքսանդր Պովետկինի հետ հոկտեմբերի 5-ին նախատեսված մենամարտից: Պատճառը կողմերի միջեւ տարաձայնություններն են դոպինգ ստուգման հարցում:

Ուկրաինական կողմը համաձայն է մենամարտին, եթե դոպինգ ստուգումն իրականացնի NADA-ն՝ ազգային հակադոպինգային ծառայությունը: Իսկ Պովետկինի կողմնակիցները գտնում են, որ մենամարտից առաջ եւ հետո բռնցքամարտիկները պետք է անալիզ հանձնեն Ռուսաստանի հակադոպինգային գործակալությունում:

Պովետկինի մենեջեր Վլադիմիր Խրյունովը համաձայն է, որպեսզի NADA-ն բռնցքամարտիկներից անալիզներ վերցնի, սակայն այն պայմանով, որ դրանք պետք է ստուգման ենթարկվեն նաեւ Ռուսաստանի եւ համաշխարհային հակադոպինգային գործակալություններում:

Հարկ է նշել, որ Կլիչկոյի թիմի կասկածները դոպինգ ստուգման վերաբերյալ անտեղի չեն: Օրերս Մոսկվայում կայացած մենամարտում պանամացի 40-ամյա բռնցքամարտիկ Գիլյերմո Ջոնսը 11-րդ ռաունդում ոչ միայն նոկաուտի էր ենթարկել ռուսաստանցի Ալեքսանդր Լեբեդեւին, այլեւ հեշտությամբ դիմացել էր վերջինիս հուժկու հարվածներին: Լեբեդեւի մենեջերները կասկածում են, որ Ջոնսը դոպինգ է ընդունել, որի շնորհիվ գտնվում էր ֆիզիկական հիանալի մարզավիճակում: Իսկ Դոն Քինգը պնդում էր, որ ամեն ինչ ազնիվ է: Նա պահանջում էր իրեն տրամադրել Ջոնսի անալիզները՝ համաշխարհային հակադոպինգային գործակալությունում ստուգելու համար:

Հիշեցնենք, որ ռուսաստանցի գործարար Վլադիմիր Խրյունովը 23 մլն դոլարով շահել էր Կլիչկո-Պովետկին մենամարտը կազմակերպելու համար անցկացված մրցույթը: Այդ գումարի 75 տոկոսը (17 մլն դոլար) անկախ մենամարտի արդյունքից կստանա Կլիչկոն, 25 տոկոսը՝ Պովետկինը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ
## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Մ Է
## 2013-2014 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
## (ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ)

| Ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Ընդունելության քննությունները | | | | Ընդունելության տեղ/այդ թվում | | | | Ուսման վարձը հազար դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մրցութային | | | ոչ մրցութային | անվճար | այդ թվում | | վճարովի ԱՏ | |
| | | | | | | | ԲԶ | ՆՊ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 150 | Մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | 1 | 50 | 260 |
| 151 | Ֆիզիկա | Ֆ(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* | 2 | 1 | | 23 | 260 |
| 152 | Քիմիա | Ք(գ) | Մ(գ)** կամՖ(գ)** | | Հլգ(գ)* | 2 | 1 | | 18 | 260 |
| 153 | Կենսաբանություն | Կ(գ) | Ք(գ)** կամՖ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | 1 | 32 | 260 |
| 154 | Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | 1 | 35 | 270 |
| 155 | Էկոլոգիական քիմիա (Բնապահպանություն և բնօգտագործում) | Ք(գ) կամԿ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* | 1 | | | 21 | 260 |
| 156 | Պատմություն | ՀԺՊ(գ) | Օտլ(գ) կամԸՊ(գ) | Հլգ(գ) | | 5 | 1 | 1 | 85 | 315 |
| 157 | Իրավագիտություն (մանկավարժություն) | ՀԺՊ(գ) | Օտլ(գ) կամԸՊ(գ) | Հլգ(գ) | | 2 | | | 60 | 585 |
| 158 | Լրագրություն (հեռուստալրագրություն) | ՀԼՀ | ՀԼՏՊ | Հլգ(գ) | | 1 | | | 25 | 340 |
| 159 | Լրագրություն (ռադիոլրագրություն) | ՌԼՀ | ՌԼՏՊ | Հլգ(գ) | | 1 | | | 15 | 340 |
| 160 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(բ) | Հլգ(գ) | Օտլ(գ)**կամ ՀԺՊ(գ)** | | 3 | | 1 | 70 | 270 |
| 161 | Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ(բ) | Անգլ(գ) | Հլգ(գ) | | 2 | | | 73 | 445 |
| 162 | Գերմաներեն լեզու և գրականություն | Գլ(բ) | Գլ(գ) | Հլգ(գ) | | 1 | | | 14 | 410 |
| 163 | Ֆրանսերեն լեզու և գրականություն | Ֆրլ(բ) | Ֆրլ(գ) | Հլգ(գ) | | 1 | | | 14 | 410 |
| 164 | Իսպաներեն լեզու և գրականություն | Օտլ(բ) | Օտլ(գ) | Հլգ(գ) | | 1 | | | 29 | 410 |
| 165 | Մշակութաբանություն | ՀԺՊ(գ) կամԸՊ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ)** | | 2 | | | 28 | 320 |
| 166 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռլգ(բ) | Ռլ(գ) | | Հլգ(գ)* | 2 | | 1 | 40 | 270 |
| 167 | Սոցիալական աշխատանք | Հլգ(գ) | Օտլ(գ) | | Մ(գ)* | 2 | | | 30 | 330 |
| 168 | Ինֆորմատիկա | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | | 35 | 320 |
| 169 | Բնագիտություն | Ք(գ) կամ Ֆ(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* | 2 | | | 20 | 260 |
| 170 | Տեխնոլոգիա և ձեռնարկչություն | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլգ(գ)* | 3 | 1 | 1 | 30 | 305 |
| 171 | Երաժշտական կրթություն | ԵՏՍ (գ,բ) | ՆԵՍԿ և երգ | | Հլգ(գ)* | 2 | | | 35 | 380 |
| 172 | Կերպարվեստ և գծագրություն | Գծն | Գն | | Հլգ(գ)* | 3 | 1 | | 60 | 390 |
| 173 | Մանկավարժություն և հոգեբանություն | Հլգ(գ) | Օտլ(գ) | Կ(գ)** | | 2 | | 1 | 70 | 375 |
| 174 | Մանկավարժություն և հոգեբանություն (նախադպրոցական) | Հլգ(գ) | Օտլ(գ) | Կ(գ)** | | 2 | | | 45 | 330 |
| 175 | Զինվորական մանկավարժություն և հոգեբանություն | Հլգ(գ) | Օտլ(գ) | | Մ(գ)* | | | | 20 | 325 |
| 176 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության) | Հլգ(գ) | Մ(գ)** | | | 2 | | | 60 | 445 |
| 177 | Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթության, ռուսաց լեզվի ուսուցմամբ) | Ռլ(գ) | Մ(գ)** | | Հլգ(գ)* | 1 | | | 9 | 410 |
| 178 | Մանկավարժություն և մեթոդիկան (նախադպրոցական կրթության) | Հլգ(գ) | Օտլ(գ) | | | 2 | | | 20 | 355 |
| 179 | Սոցիալական մանկավարժություն | Հլգ(գ) | Մ(գ)** | | | 2 | | | 35 | 330 |
| 180 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Տիֆլոմանկավարժություն) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 1 | | | 23 | 270 |
| 181 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Սուրդոմանկավարժություն) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 1 | | | 23 | 270 |
| 182 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Օլիգոֆրենոմանկավարժություն) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 1 | | | 23 | 270 |
| 183 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Լոգոպեդիա) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 2 | | | 45 | 325 |
| 184 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Հատուկ հոգեբանություն) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 2 | | | 35 | 325 |
| 185 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Էրգոթերապիա) | Հլգ(գ) | Կ(գ)** | | Անգլ(գ)* | 1 | | | 12 | 270 |
| 186 | Հատուկ կրթության մանկավարժություն և հոգեբանություն (Նախադպրոցական) | Հլգ(գ) | Կ(գ)** | | | 1 | | | 16 | 270 |
| 187 | Մանկավարժություն և սոցիոլոգիա | Հլգ(գ) | Օտլ(գ) | | Մ(գ)* | 2 | | | 38 | 355 |
| 188 | Ռեժիսուրա (մասսայական հանդիսությունների ռեժիսուրա) | ԴՎ | Ռեժ | | Հլգ(գ)* | 1 | | | 16 | 380 |
| 189 | Ռեժիսուրա (հեռուստաֆիլմերի և հեռուստածրագրերի ռեժիսուրա) | ԴՎ | Ռեժ | | Հլգ(գ)* | 2 | | | 15 | 380 |
| 190 | Պարարվեստ (ժողովրդական և դասական պարեր, ժամանակակից պարահանդեսային պարեր) | Դպար | ՀԺ կամԺՊ պար | | Հլգ(գ)* | 2 | | | 30 | 380 |
| 191 | Կիրառական արվեստ | Գծն | Կոմ | | Հլգ(գ)* | 1 | | | 35 | 390 |
| 192 | Գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ | Հլգ(գ) | Օտլ(գ) | ՀԺՊ(գ)** | | 2 | | | 20 | 265 |
| 193 | Սոցիալ-մշակութային գործունեություն (թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն) | Հլգ(գ) | Օտլ(գ) | ՀԺՊ(գ)** | | 2 | | | 23 | 265 |
| 194 | Սոցիալ-մշակութային գործունեություն (փողային և էստրադային նվագախմբի ղեկավարում) | ՄԳԴ(բ) | ՍԵՏ(բ) | | Հլգ(գ)* | 2 | | | 13 | 260 |
| 195 | Սոցիալ-մշակութային գործունեություն (ժողգործիքների նվագախմբերի ղեկավարում) | ՄԳԴ(բ) | ՍԵՏ(բ) | | Հլգ(գ)* | 2 | | | 13 | 260 |
| 196 | Սոցիալ-մշակութային գործունեություն (գեղարվեստական լուսանկարչություն) | ԳԼՀ(բ) | ՄՀ(բ) | | Հլգ(գ)* | 2 | 1 | | 15 | 385 |
| 197 | Սոցիալ-մշակութային գործունեություն (օպերատորություն) | ՕՊՀ(բ) | ՄՀ(բ) | | Հլգ(գ)* | 2 | | | 15 | 385 |
| 198 | Սոցիալ-մշակութային գործունեություն (կառավարում՝ մենեջմենթ) | ՍՄԳԿ(գ,բ) | ՄՊ(բ) | | Հլգ(գ)* | 3 | | | 25 | 385 |
| 199 | Կերպարվեստի պատմություն և տեսություն | ԸԱՊ(բ) | ԿՏ(գ) | | Հլգ(գ)* | 2 | | | 23 | 325 |
| 200 | Հագուստի մոդելավորում | Գծն | Կոմ | | Հլգ(գ)* | | | | 30 | 395 |

## Ծանոթություն.

▼ Համալսարան կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

▼ ՀՀ երկքաղաքացիները եւ օտարերկրացիները համալսարան կարող են ընդունվել ընդհանուր հիմունքներով կամ ըստ ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի:

▼ Համալսարանի համապատասխան մասնագիտության բակալավրի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները համարվում են ՀՀ հանրակրթական դպրոցի լիարժեք ուսուցիչ:

▼ Բակալավրիատում սովորող ուսանողները, սկսած 3-րդ կուրսից, իրենց մասնագիտությանը համապատասխան կարող են ստանալ հարակից մասնագիտություն:

▼ ՀՀ սահմանամերձ, լեռնային եւ բարձրլեռնային համայնքների ու դպրոցների ներկայացրած հայտերի հիման վրա մանկավարժական մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի մինչեւ 50%-ի չափով կազմակերպվում է մանկավարժական կադրերի նպատակային ընդունելություն: Նպատակային ընդունվողները մինչեւ հրամանագրումը, գործուղող եւ ընդունող կողմերի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում են պայմանագիր:

▼ * Մեկ աստղանիշով նշված «Հայոց լեզու եւ գրականություն» ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

▼ **Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների եւ քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

▼ *Դիմորդը դիմում-հայտի հետ միասին ներկայացնում է.*

1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ).

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի).

3) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում).

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական): Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.

5) զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին.

6) արտոնություններից օգտվող դիմորդները (Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաներ, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիներ, 1-ին ու 2-րդ խմբերի, ինչպես նաեւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամներ, առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան երեխաներ) ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.

7) միջազգային եւ հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ) դիպլոմներ.

8) փաստաթղթերը ձեւակերպելու, ինչպես նաեւ ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու համար՝ 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիր:

▼ Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են տվյալ տարվա մայիսի 5-ից հունիսի 1-ը, ժամը 18:00՝ շաբաթվա բոլոր օրերին (բացի մայիսի 9-ից եւ 12-ից):

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| (բ) | բանավոր |
| ԿՏ | Կերպարվեստի տեսություն |
| (գ) | գրավոր |
| ԸՊ | Ընդհանուր պատմություն |
| Ա | Աշխարհագրություն |
| ՀԺՊ | Հայ ժողովրդի պատմություն |
| Կ | Կենսաբանություն |
| ԵՏՍ | Երաժշտության տեսություն եւ սոլֆեջիո |
| Մ | Մաթեմատիկա |
| ՆԵՍԿ | Նվագարաններով երաժշտական ստեղծագործության կատարում |
| Ք | Քիմիա |
| Ռլ | Ռուսաց լեզու |
| Ֆ | Ֆիզիկա |
| Ռլգ | Ռուսաց լեզու եւ գրականություն |
| Անգլ | Անգլերեն լեզու |
| ԴՎ | Դերասանի վարպետություն |
| Ֆրլ | Ֆրանսերեն լեզու |
| Ռեժ | Ռեժիսուրա |
| Գլ | Գերմաներեն լեզու |
| ՍՄԳԿ | Սոցիալ-մշակութային գործունեության կազմակերպում |
| Օտլ | Օտար լեզու |
| ԳԼՀ | Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ |
| Հլգ | Հայոց լեզու եւ գրականություն |
| ՀԼՀ | Հեռուստալրագրության հիմունքներ |
| Գծն | Գծանկար |
| ՀԼՏՊ | Հեռուստալրագրության տեսություն եւ պատմություն |
| Գն | Գեղանկար |
| ՌԼՀ | Ռադիոլրագրության հիմունքներ |
| Կոմ | Կոմպոզիցիա |
| ՌԼՏՊ | Ռադիոլրագրության տեսություն եւ պատմություն |
| Դպար | Դասական պար |
| ՄՀ | Մասնագիտական հարցազրույց |
| ՀԺ | Հայկական ժողովրդական պար |
| ՄԳԴ | Մասնագիտական գործիք եւ դիրիժորություն |
| ԺՊ | Ժամանակակից պարահանդեսային պար |
| ՕՊՀ | Օպերատորության հիմունքներ |
| ԸԱՊ | Ընդհանուր արվեստի պատմություն |
| ՄՊ | Մշակույթի պատմություն |

*Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 59-70-69 հեռախոսահամարով,*
*վեբկայք՝ www.armspu.am*

***ՌԵԿՏՈՐԱՏ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 24.5.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: